Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1224
1225
1226
1227
1228
1229
1230
1231
1232

6138
Z-26

2016

[illegible] – 1574 [illegible]
1514 [illegible]
1522 [illegible]
1466 [illegible]
1440 [illegible]
1618 [illegible]
1614 [illegible]
1722 [illegible]
1723 [illegible]

[illegible]

2002

2010

Prof. K. Fuchsgruber

Geschenk
[illegible]

[illegible], 1902.

16472

1722

ԿԸ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍԻՈՒ ԹԻՒՆ ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ARMENIAN ASIAN CONSTANTINOPLE
1908

Պէտք է յուսալ թէ իւրաքանչիւր սովորող անշուշտ լաւ մարդ կը դառնայ։

Դաստիարակութեան ու կրթութեան նպատակը պիտի լինի այնպիսի անհատներ պատրաստել որ ընդունակ լինին կեանքի բոլոր պայմաններին, և միանգամայն հետզհետէ կատարելագործուելու աշխատեն։

Պէտք է դաստիարակութիւնն ու կրթութիւնը պաշտպանել ոչ թէ նորա համար, որ մարդս կարելիին չափ լաւ աշխատաւոր դառնայ, այլ որպէս զի աշխատաւորը կարելիին չափ լաւ մարդ դառնայ։

Յանցաւորութեան գլխաւոր դրդիչներն են աբբեցողութիւնն ու տգիտութիւնը։

7413-57

4r
613·95

ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՆԱԿ

Մանկութեան մատաղ հոգեկը կարօտ է խելացի ու խնամոտ հոգացողութեան։

Երեխայի կեանքի հէնց առաջին տարիներում միայն կարելի է յաջողութեամբ մաքառել վատթար հակումների դէմ, որ ժառանգաբար սերունդից սերունդ են անցնում։ Հէնց այդ տարիներում պէտք է լաւագոյն ձգտումների հիմքը դնել, որ ապագային զարգանան ու դառնան հաստատուն համոզմունքներ ու անխախտ սովորութիւններ։

Անհրաժեշտ է, որ ծնողներն ու դաստիարակները բժշկական ու բնագիտական տեղեկութիւններ ունենան, որպէսզի ժամանակին ու պէտքին պէս օգնեն ամող մանկութեան և ապահովեն նրա ֆիզիկական ու բարոյական առողջութիւնը։

Այնուհետև, դպրոցի ու ընտանիքի համերաշխ գործունէութեան շնորհիւ՝ դաստիարակութեան դժուարին խնդիրը մեծապէս կը հեշտանայ երկուսի համար էլ։

Բայց եթէ այս պայմանները մէջ տեղը չլինին, մատաղ սերունդը շատ կամ սակաւ չափով կը տառապի, և առաջ կը գայ բարոյապէս հաշմացած, մտքով ու կամքով մի տկար սերունդ։

Իսկ դպրոցի ու ընտանիքի մէջ այն ժամանակ միայն բարոյական միութիւն կը հաստատուի, երբ կանայք ևս իրանց մասաւոր կրթութեամբ այր մարդոց հաւասարուին։

Ապաքէն մօր ազդեցութիւնը զաւակների վերայ առաւել զօրաւոր է, քան թէ հօր ազդեցութիւնը. և վա՜յ այն հասարակութեան՝ ուր կանայք աղաստ ու ընդարձակ միջոցներ չունին բազմակողմանի ու բարձրագոյն զարգացման համար։

Մեր կեանքը կրծում ու մաշում են բարոյական ու ֆիզիքական անթիւ տառապանքներ, պէս պէս ախտեր ու մոլորութիւններ, և տեսակ-տեսակ չարիքներ։

Այս ամէն չարիքներից մեզ կարող է փրկել միմիայն երկու սեռի ընտիր դաստիարակութիւնն ու մտաւորական զարգացումը։

Այսպիսի դէպքում միայն ամէն մարդ կարող է ասել իւր զաւակին. «մի մոռանալ՝ որ դու հասարակութեան համար ես ստեղծուած, որ քու գործունէութիւնը անտարբեր բան չէ նրա համար. թող քեզ օտար չլինի այն ամէնը, ինչ որ քեզ նման մի այլ մարդու է վերաբերում։ զարգացրու կեանքդ ամենայն ուղղութեամբ, եղի՛ր հարուստ ներքին ու արտաքին եռանդով»։

Այսպէս միայն կունենանք զարգացած քաղաքացիներ, պետութեան ու հայրենիքին օգտակար լինելու ընդունակ անհատներ։

Ս.-Պետերբուրգ, 1901 թ. Բ. Ս. Բոբոլեան.

Ս..

Երեխաների կրթութեան ու դաստիարակութեան խնդիրը ամենակարեւոր, հրատապ ու անյետաձգելի խնդիրներից մէկն է մեզ համար։

Անտարակոյս՝ եթէ այդ խնդիրը կանոնաւորապէս վճռուի, մեծ բարերար ազդեցութիւն կունենայ մեր ժողովրդի կեանքի բոլոր երևոյթների վերայ՝ բարձրացնելով նրա բարեկեցութիւնը, բարոյականն ու քաղաքական զօրութիւնը։

Մի կողմ թողնելով մեր դպրոցների պակասութիւնները ու դրա պատճառները, մենք նախապէս կը խօսենք մի ուրիշ կարևոր խնդրի, այն է՝ մանուկների նախադպրոցական—ընտանեկան կրթութեան մասին, որ առաջինի հետ անխզելի կերպով միացած է։

Այս վերջին խնդիրը ընդհանրապէս անտես է անվում։ Չնայելով նրա անչափ մեծ կարևորութեան, արտաքին նախադպրոցական կեանքում է ձևակերպվում ապագայ մարդը իւր բոլոր անհատական առանձնութիւններով։

Ո՞վ իւր կեանքի մէջ չէ կրել դառն բոպէներ և չի տեսել մեր երիտասարդ սերունդի մէջ ամէն տեսակ թշուառութիւններ, կենցաղական պէսպէս աղէտներ, անյաջողութիւններ, հիասթափումներ ու դրամներ:

Եւ այսպիսի սովորական երևոյթների պատճառն այն է միայն, որ մեծերը, մեր հայրերն ու դաստիարակները իրանց առօրեայ գործերով զբաղուելով, միմիայն վաստակի եաւելից ընկնելով՝ չափազանց սակաւ ուշադրութիւն են դարձրել, կամ ընչին նշանակութիւն են տուել—և այս՝ անհոգութեամբ և կամ իրանց վերայ ընկած բարոյական մեծ պատասխանատուութիւնը չհասկանալով—մանուկների նախադպրոցական՝ մտաւոր, հոգևոր ու ֆիզիքական կանոնաւոր զարգացման:

Այն-ինչ, միայն այս կերպով, այսինքն մանուկի բնական ոյժերն կանոնաւորապէս, ասպիճանաբար ու ներդաշնակօրէն զարգացնելով, կարող ենք մեր տեղը բռնող երիտասարդ սերունդին տալ առողջ կազմուածք, անվեհեր ու զուարթ ոգի, կենսունակութիւն, բարի հոգի, բարոյականութիւն, տոկունութիւն, ինքնագործունէութիւն, աշխատանքի սէր ու յարգանք, պարտքի գիտակցութիւն, ընտանեսիրութիւն, հայրենասիրութիւն և այլն և այլն:

Այս բոլոր ընտիր յատկութիւնների զարգացման ամենազօրաւոր գործօնը հարկաւ ընտանիքն է, բնութիւնը, խելացի դաստիարակութիւնը, սրտագին յարաբերութիւնն ու մանուկի հոգին հասկանալը, ընկերութիւնը, խմբական զբօսանքները, խաղերը, ընթերցումները, երաժշտութիւնն ու մարմնամարզութիւնը:

Նախադպրոցական հասակը իւր քնքշութեամբը ու դիւրազգայութեամբ առաւել կարօտ է խնամքի, անընդհատ ու ջերմ հոգացողութեան, մերձաւոր անհատի—հօր, մօր կամ դաստիարակի հսկողութեան:

Այսպէս ուրեմն ընտանիքն ու ընտանեկան օջախը այն առաջին արհեստանոցն է, ուր ապագայի երիտասարդ սերունդն է դարբնվում:

Այստեղ մանուկը առաջին տպաւորութիւններն է ստանում, այստեղ կազմակերպվում է նրա բնաւորութիւնը, հակումները, սովորութիւնները, կամքը. այս արհեստանոցի մէջ ձևակերպվում է, այսպէս ասենք, նրա ֆիզիքական կազմուածքը, հասակն ու բնականը:

Բայց մեր ընտանեկան կեանքի պարագաները՝ ժամանակակից ծանր հանգամանքների պատճառով, մեծապէս վնասում են մատաղ օրգանիզմի ընդհանուր զարգացման:

Քաղաքային հոգսերով լի ու անհանգիստ կեանքը, բնութեան հեռաւորութիւնը կամ պակասութիւնը, չզբոսնելը, թանկութիւնը, մեծերի հետ մշտապէս շփուելը, բնակարանների նեղուածք լինելը, այս ամէնը շատ վատ ներդործութիւն ունին մանկան ֆիզիքականի, մտքի ու սրտի վերայ:

Միւս կողմից էլ ճշմարիտ մանկավարժների սակաւութիւնը, մայրերի անպատրաստ լինելը, մրցակիցների շատութեան պատճառով պետական

դպրոցները շուտով մոռնալու անհրաժեշտ պէտքը, նոյնպէս խանգարում են մանկան կանոնաւոր զարգացումը:

Այսպիսի հանգամանքների պատճառով հարկ է լինում մանկան ոյժերը սաստկապէս լարել, միաքը յոգնեցնել ի վնաս նրա ֆիզիքականի, ի վնաս նրա առողջութեան:

Եւ այս բոլորի հետևանք՝ հրապարակ է ելնում թուլակազմ, ֆիզիքապէս վատուժ, արդէն իսկ չարչարուած անհատ, սակաւարիւն, բնութեամբ մեռած, ջղային, քնաղուրկ և այլն և այլն:

Ի՞նչ կարող է ներկայացնել մի այսպիսի չարչարուած անհատ, այն էլ առանց կամքի ու բնաւորութեան:

Մեր անկիրթ, պղերգ ու ծոյլ հասարակութեան համար մանկավարժական խնդիրներն անլուծելի ու զառանցանք են թւում: բայց անշուշտ վաղ կամ ուշ կը սթափուեն մեր ամէն բանի մէջ քնած ու անհոգ ծնողները, կը սարսափին մտածել այն մեծ ու սուրբ պարտականութիւնների մասին իրանց որդոց նկատմամբ, որ ծանրացած է նրանց վերայ:

Ամէն ուրեք մարդիկ են պահանջում, աշխատաւորներ, եռանդ, ազնուութիւն, գիտութիւն, մաքառումն. ունի՞նք արդեօք այս ամէնը...

Դժբախտաբար ոչ, կամ շատ սակաւ:

Մեր մտաւոր կրթութիւնը մի կէտի վերայ է կանգնած. մեր ժողովրդի բարեկեցութիւնը հետզհետէ ընկնում է, նրա ֆիզիքական առողջութիւնը քայքայվում:

Ստեղծող ոգի, ձեռներէցութիւն, տաղանդ՝ այս ամէնը անհետ անցնում են. իդէալի փոխանակ բահաղը, փառասիրութիւնն ու եսասիրութիւնն են իշխում:

Այսպիսի ծանր բոպէներում ծնողների դերը առաւել ևս մեծ նշանակութիւն և ոյժ է ստանում:

Այս կերպով յանցանքի մեծ մասը այստեղ էլ ընկնում է մեզ՝ հայրերիս վերայ, մեր մեծահասակների, մեր հասարակութեան վերայ:

Մեր հայրենիքը խորապէս լուսաւորելով՝ մենք կը փառաւորենք նրան, նրա զօրութիւնը կը բարձրացնենք, մեր երեխաներին երջանկութիւն կը պարգևենք դժուարին ու հոյակապ գործունէութեան՝ իրանց հայրենիքի շահերին ազնուապէս ու անխոնջ ծառայելու:

Երեխաներին կրթելու համար նախ և առաջ պէտք է որ մենք մեզ կրթենք, ուշք դարձնենք մեր ամէն մի քայլափոխին, և վերլուծենք մեր բոլոր վարմունքն ու գործերը:

Մենք ծնողներս, լոյս աշխարհ հանելով զաւակներ, նախ և առաջ և ամէնից աւելի պարտական ենք ամէն բոպէ յիշել մեր պարտքը նրանց վերաբերմամբ, յիշել թէ նրանց ապագան և երջանկութիւնը շատ բանի մէջ մեր ձեռքին է:

Ծնողաց խղճմտանքի վերայ դրուած խնդիրը չափազանց ծանր է:

Պէտք չէ մոռանալ, որ մենք անչափ ծոյլ ու

անհոգ ենք, ամէն տեսակ արգելքների, անյաջողութիւնների ու նոր գործի առաջ վհատող:

Մեզ սթափեցնելու, մեր ինքնագործունէութիւնը շարժելու համար պէտք են և հզօր ազդիչներ:

Ահա այս իսկ պատճառով հարկաւոր է յաճախակի մեր հոգին յուզել, մեր զգայնութիւնը գրգռել, մեր եռանդն ու խիզձը զարթեցնել:

Այժմ ամենքս էլ այնչափ խորասուզուած ենք կենցաղական գործերի մէջ, այնչափ հեռամուտ ենք ժամանակակից կեանքի պէս-պէս հաճոյքներին, այնչափ ոյժ, առողջութիւն ու ժամանակ ենք սպառում մեր գրամական միջոցներն աւելացնելու, սեռի փառք վաստակելու, պէս-պէս ասիճանների համար և այլն և այլն, որ մեր սրտի համար ամենաթանկագին, մեր սրտին ամենամօտ գործը—մեր մանուկների դաստիարակութեան գործը — խպառ յետ է մղուած, բոլորովին երկրորդական բան է դարձած:

Ինչպէս յառաջագոյն ասացինք՝ մանուկի նախնական դաստիարակութեան մէջ մտան ունին բազմատեսակ գործօններ: Սոցա ամէնքի ազդեցութիւնը միապէս չէ, և տարբեր թէ որակի և թէ քանակութեան կողմից:

Սրանցից ոմանք, օրինակ՝ բնութիւնը, ծնողքը, ընտանիքը, պարագաները, ծառաները, ապրելու կերպը և այլն, անընդհատ ներգործում են հէնց այն րոպէից, երբ մանուկը լոյս—աշխարհ է տեսնում:

Միւսները, ինչպէս՝ հիւրերը, այլ և այլ զուարճութիւնները, տեսարանները, խաղերը, խաղալիքները, ճանապարհորդութիւնները և այլն, ազդում են նոյնպէս մանուկի վերայ շատ կամ սակաւ տեղութեամբ, բայց պարբերաբար, կարճես ոստիւններով, ընդհատումներով:

Վերջապէս այդ գործօնների մէջ կան և այնպիսիները, որոնց ներգործութիւնը արտայայտվում է թռուցիկ, հարեւանցի, պատահաբար, անսպասելի կերպով, երբ մանուկը միանգամից սասակապէս յուզվում, զրգռվում է. այսպէս են օրինակ՝ մահը, սաստիկ վիշտը, մի ծանր դժբախտութիւն, սաստիկ կոպտութիւն և այլն:

Դաստիարակութեան մէջ ամենաշլխաւոր գործօններից մէկն է բնութիւնը, որի ազդեցութիւնը միշտ օգտակար ու բարերար կարող է լինել, եթէ միայն խելացի կերպով գործադրուի:

Եւ արդարև, արևն ու լոյսը, օդը, բարեխառնութիւնն ու չորութիւնը, երկինքը, ջուրը, լեռները ու դաշտավայրերը, կենդանիներն ու բոյսերը և այլն, այս ամէնը անընդհատ ներգործում են ձևակերպուող մտաւոր օրգանիզմի վերայ:

Բնութիւնը իւր այս պէս-պէս երևոյթների ազդեցութեամբ տալիս է մանուկին ֆիզիքական առողջութիւն, կանոնաւոր աճում, լաւ քուն, կանոնաւոր սնունդ, և միանգամայն զարգացնում է նրա մտաւոր ու հոգեւոր կարողութիւնները—նրա հարցասիրութիւնը, վերլուծողութիւնը, եռանդը, ինքնագործունէութիւնը, ճշտապահութիւնը, զննողութիւնը և այլն:

Բնութեան հետ դաստիարակութեան մէջ առաջին տեղն է բռնում նաև ընտանիքը, իսկ մանուկի նախնական կեանքի շրջանում երկար ժամանակ գլխաւոր դերը մայրն է կատարում:

Եւ արդարև՝ իւր մօր կաթով մանուկը ստանում է այն բոլոր նիւթը, որ անհրաժեշտ է իւր օրգանիզմի զարգացման համար:

Մօր կաթը ոչ միայն մանուկի մարմնի աճեցման է նպաստում, այլ և խորհրդաւոր կերպով տալիս է նրան մօր անհատական յատկութիւնները:

Մանուկ սնուցանող մայրը կարծես թէ վարակում է նրան իւր մտաւոր, հոգեւոր ու ֆիզիքական յատկութիւններով ու թերութիւններով:

Այս իսկ պատճառով անհնար է չապշել չը զարմանալ այն սխրալի իրողութեան վերայ, որ ժամանակակից մայրերը՝ կրթուած կոչուող դասակարգից, հնար ունենալով իսկ կատարելու մի այնպիսի նախանձելի ու սուրբ պարտականութիւն՝ բնութիւնից իսկ սահմանուած, յանձնում են իրենց դերը, առանց ամենեին խղճահարուելու, օտար՝ բոլորովին օտար անձնաւորութեան:

Ապաքէն այսպէս վարուելով՝ մայրը ծանր ու աններելի յանցանք է գործում այն էակի առաջ, որին ինն ամիս իւր արգանդի մէջ է կրել:

Ապաքէն վարձկան, բոլորովին հաստարակ անձնաւորութեան յանձնելով իրենց զաւակների սնունդը, մարդկայնական զգացմունքների առաջին բացումը, առաջին ժպիտը, առաջին ճիչը՝ մայրերը միանգամայն վտանգի տակ են ձգում դրա հետ միասին նաև երբեմն իրանց որդւոց ֆիզիքականն ու բարոյականը պէս-պէս վարակումներով, որ անհնար է լինում շատ անգամ և բժշկելը:

Ընայելով ծանր պայմաններին և ժամանակիս կեանքի բարդութիւններին, այնուամենայնիւ մայրը պարտական է մոքառել, ամէն տեսակ միջոցներ փորձել, յիշելով թէ իւր ամէն մի զանցառութիւնը, ամէն մի սխալմունքը, նոյն իսկ չնչին անհոգութիւնը կարող է շատ դառն, յաճախ անուղղելի հետեւանքներ առաջ բերել իւր սրտին թանկ էակի ապագայ կեանքի մէջ:

Մանուկը մեծանում է. հեռզհետէ նրա մէջ զարգանում է մտածողութիւն, ինքնագործունէութիւն, քիչ-շատ դիտակցութիւն. իւր չափազանց դիւրազգայնութեան ու դիւրազգացութեան շնորհիւ նա ամէն մի բոպէ ապրում է, ամէն բանով զբաղվում, ամէն բանի մտադիր է, ամէն բան լսում, զգում ու դիտում է:

Այս ամէնի ազդեցութեամբ նրա բնաւորութեան գծերն են կազմակերպվում: Նրա սովորութիւնները, հակումները, ճաշակը, սէրն ու հակակրութիւնը կերպարանաւորվում:

Մի խօսքով՝ ստիճանաբար ու հեռզհետէ պատրաստվում է այն ատաղձը, որից ձևակերպվում է ապագայ անձնաւորութիւնը:

Ահա այս ժամանակ եթէ մայրը ցանկանում է,

և պարտական էլ է, որ իւր զաւակը կատարեալ մարդ դառնայ բառիս բուն նշանակութեամբ, պէտք է իմանայ, թէ իւր կեանքի երկու-երրորդականն այլ ևս չի պատկանում իրան, այլ միայն իւր զաւակին:

Նոյն իսկ կեանքը ամէն մի քայլափոխում բազմատեսակ դէպքերով ցոյց է տալիս, թէ հէնց այս շրջանումն է, որ մանուկն ածում է ոչ թէ օրով, այլ ժամով, մանուկի օրգանիզմը չի նիրհում, այլ ընդհակառակը զօրեղապէս աշխատում է, մինչև անդամ աւելի քան թէ մի այլ ժամանակ:

Զափազանց զգայուն ու զիւրազգայ լինելով՝ նա այս ժամանակ, կարելի է ասել, շրջապատող բնութեան բազմատեսակ ազդեցութիւններով յաղենում է:

Եթէ նրա շուրջը թագաւորում է սէր, բարեկամութիւն, ընտանեսիրութիւն, աշխատանք, կարգկանոն, պարզի գիտակցութիւն և այլն, նրա օրգանիզմի մէջ էլ այս բոլորի հետքերն են մնում: և նա անզգայապէս, կամաց-կամաց այս գեղեցիկ յատկութիւններով հարստանում է, որոնք միայն պարգևում են մարդոյ երջանկութիւն, հանգիստ ու հաճութիւն:

Բայի ծնողներից՝ ընտանիքի նիստ ու կացն ևս մանուկի զարգացման մէջ մեծ ու նշանաւոր դեր է խաղում, և այս գործօնի ազդեցութիւնն ևս պէտք է միշտ ի նկատի ունենան դաստիարակներն ու ծնողները:

Ծնողները կարող են շատ կամ սակաւ չափով կանոնաւորել, ակարացնել կամ զօրացնել շրջապատող բնութեան ազդեցութիւնը՝ յարմարուելով տեղին պայմաններին, ժամանակին ու հանգամանքներին:

Գ.

Ընտանեկան նիստ ու կացի ազդեցութիւնն առաւելապէս զգալի է քաղաքում դաստիարակուող մանուկի վերայ:

Մանուկը գիւղական կեանքում, մայր բնութեան ծոցում առաւել նուազ չափով է զանվում ընտանեկան նիստ ու կացի ազդեցութեան տակ:

Նա լիապէս հնարաւորութիւն ունի իւր օրգանիզմի բոլոր կողմերը անկախօրէն զարգացնելու՝ մինչև իսկ առանց իւր ծնողների առանձին օգնութեան:

Այսպէս՝ իւր ֆիզիքականը զարգացնելու համար նա ունի անտառ, պարտէզ, բանջարանոց, ուր միշտ աշխատանքի մէջ է, բեռն է կրում, փորում, ցատքում, փայտ է կոտրում և կամ պատ բռնում:

Մաքի համար դաշտը առաւել ընդարձակութիւն է ներկայացնում: ամէն մի քայլափոխին նա տեսնում և դիտում է բնութեան կեանքը և այս կերպով ընդլայնում է նրա մտաւորական հորիզոնն ու մանուկը թեթևակի, այսպէս ասենք, «ձրիաբար» ստանում է շատ գործնական գիտելիքներ, որոնք պէտք կը լինին ապագայ կեանքում՝ դպրոցից սկսած:

Մանուկի սիրան ու հոգին նոյնպէս չեն քնում, այլ աշխատում են բովանդակ զօրութեամբ:

Ունենալով բանջարանոց, ծառ, կամ մի կենդանի բարեկամ՝ շուն, կատու, կով — մի խօսքով անտեսութիւն — մանուկը նոցա կեանքով է ապրում, սիրում, փայփայում և խնամում նոցա:

Այս բոլորը մի այլ բարերար ազդեցութիւն ևս ունի. մանուկը զբաղուած լինելով ընտանեկան գործերի մէջ, շուտ չի մնում հրապարակ, սակաւ անգամ է լսում անպէտք և յաճախ վնասակար խօսքեր ու դատողութիւններ:

Մի խօսքով բնութիւնը անզգայաբար, բայց առանց երբէք դադարելու, ղեկավարում է մանուկի ուժերի զարգացումը և նրա մատաղ օրգանիզմը բազմատեսակ վնասակար ազդեցութիւններից պահպանում:

Իրենց զաւակների օգուտն ի նկատի առնելով ծնողները կարող էին տարուայ մեծ մասը դիւղում անց կացնել:

Բայց դժբախտաբար տնտեսական այլ և այլ պատճառներով այս իրագործել հնարաւոր չէ. կարելի է մասամբ իրագործել զբօսանքներ կատարելով և կամ երկար ժամանակ ամարանոցում ապրելով:

Բոլորովին այլ դեր է խաղում ընտանեկան նիստ ու կացը այն մանուկի մէջ, որ քաղաքում չորս պատերի մէջ է մեծանում:

Նա ֆիզիքապէս ու հոգեպէս կերպարանաւորւում է այն յարկի տակ, ուր և ծնել է, այսինքն իւր մանկանոցում, ապա սեղանատանը. յետոյ մօր ննջարանում, հօր առանձնասենեակում և կամ միւս

սենեակներում, հարկաւ քիչ-շատ հարուստ ընտանիքներում:

Այս անկիւններից ամէն մէկը մատաղ էակի մէջ որոշ հետք է թողնում, որոշ յիշողութիւններ՝ մինչև իսկ բոլոր կեանքում:

Մանկանոցի մէջ մանուկը գտնվում է իւր ծնողական հէնց առաջին օրուանից:

Նրա ոճման ու առողջութեան համար պահանջվում է ամէն բոպէ մօր կողմից մեծ խնամք ու հոգացողութիւն:

Առողջապահութիւնը պահանջում է, որ սենեակի օդը միշտ մաքուր լինի, որոշ բարեխառնութեան, որ նորածինը հեռու պահուի ամէն տեսակ սուր ձայներից, արևի զօրաւոր լոյսից և այլն:

Այս ամէն պահանջներն անտես առնելով՝ մեծապէս կը վնասենք մանուկի առողջութեան, և մեր անհոգութեան հետևանքը այն կը լինի, որ մանուկը այս կամ այն հիւանդութիւնն ու տկարութիւնը կը ստանայ, որը բժշկել միշտ հեշտ չի լինում, և երբեմն իսկ խրոնիկական կը դառնայ կամ անբուժելի կը մնայ:

Վերջապէս մանկանոցի մէջ մանուկը սկսում է ճանաչել իրան ու շրջապատող աշխարհը. այնտեղ առաջին անգամ ստանում է նա իւր մօր առաջին համբոյրը, իւր մերձաւորների փաղաքշանքն ու սէրը:

Այստեղ է վառվում այն կրակը, աստուածային այն կայծը, որ մերձաւորներին կապում մի ամբողջութիւն է դարձնում, շաղկապում մի ըն-

անիք է ձևացնում՝ որ հասարակութեան ու պետութեան օգտակար անդամ է հանդիսանում:

Այս բարձր, այս վսեմ տեղը — մանկանոցը — պէտք է որ իւր կազմութեամբ համապատասխան լինի առողջապահութեան բոլոր պահանջներին:

Նախ և առաջ կարևոր է՝ որ լուսառատ լինի, չոր, տաք, առանձնացած՝ դէթ առաջին ժամանակները, միւս բոլոր բնակիչներից:

Բայց այս պահանջները դժուար են իրագործվում: ընդհանրապէս մանկանոցի մէջ ուրիշներն էլ են ապրում, և հետևաբար այնտեղ էլ անպակաս են լինում կանչ, ճիչ, իրարանցում: օդը ապականվում է, և այս բոլորը մատաղ օրգանիզմի համար անհետևանք կարող չէ մնալ:

Այսպիսի պայմաններում ի՞նչպէս կարող է մօր ազդեցութիւնը երևալ, ի՞նչպէս կարող է մանուկը աղատ զարգանալ:

Դ.

Պրոֆեսսոր Սիկարսկու կարծիքով ընտանիքի դերը կրթութեան մէջ առաւել նշանաւոր է նրանով, որ նա է միայն ընդունակ անհատ պատրաստել. մանկական պարտէզները, մնուրները, դպրոցը միջակ մարդ են պատրաստում, միջակ՝ սովորական մանկական հոգի են դաստիարակում, բայց չեն կարողանում պէտքին պէս անհատականութիւն ստեղծել:

Այն-ինչ մարդկութեան յառաջադիմութիւնը անհատականութեան զարգացումից է կախուած. որքան որ ազատ ու անարգել կերպով է զարգանում անհատ անձնաւորութիւնը, այնքան էլ ընդունակ կը լինի նա նոր սկզբունքներ ու հոսանք մտցնել կեանքի ընդհանուր հոսանքի մէջ:

Անհատականութիւնը ճշմարտապէս զարգանալ կարող է միմիայն ընտանիքի մէջ:

Մանուկի առանձին որոշիչ յատկութիւնները, նրա մտքի ու հոգու առանձնական նրբութիւնները, ուրիշ խօսքերով՝ մանուկի անհատականութիւնը միմիայն իւր ընտանիքի մէջ կարող է բնական հող գտնել, առաւել ճիշդ ու լաւ գնահատուել, ապա ուրեմն և աւելի ճիշդ ու կանոնաւոր կրթուել:

Ընտանեկան կրթութեան կարևոր նշանակութիւնը երբէք չէ կարող տարակուսի տակ ընկնել. և ընտանիքի մէջ էլ կրթութեան առաջնորդութիւնը սովորաբար մօր ձեռքին է. ինքնին բնութիւնը դրած է նրա վերայ պարտք՝ իւր զաւակին սնուցանելու:

Ինչպէս որ վարձկան սանտուի կաթը երբէք չէ կարող հարազատ մօր կաթի տեղը բռնել, այնպէս էլ մտաւոր ու բարոյական դաստիարակութեան ժամանակ ոչ մի կողմնակի դաստիարակ կարող չէ մօր գործը կատարել:

Բայց դժբախտաբար մայրերը լիովին չեն գնահատում այն ազդեցութիւնը, որ ունին ապագայ սերունդի բնաւորութեան ու կեանքի վերայ, և

այս իսկ պատճառով կարևոր լրջմտութեամբ չէն նայում իրանց մայրական պարտականութիւնների վերայ։

Տղոց ունեցած սխալների ու վատթար հակումների պատասխանատուութիւնը նոնպէս մայրերի վերայ է ընկնում։

Շատ մայրեր թեթևամտութեամբ են վերաբերում իրանց զաւկների կրթութեան, վայր է վերայ են նայում այս սուրբ դործի վերայ, որը որպէս թէ ոչ մի նախապատրաստութիւն չի պահանջում։

Այսպէս՝ ֆիզիքականի զարդացման նկատմամբ նրանք իրանց պարտքը լիովին կատարած են համարում, երբ մանուկը կուշտ է, վրան—դլուխը, հագնուած. մաքի ու բարոյականի դաստիարակութեան վերաբերեալ խնդիրն աւելի քիչ է զբաղեցնում. վաղ մանկութեան ժամանակ նրա վերայ ամենևին ուշադրութիւն չէն դարձնում, իսկ յետոյ՝ երբ մանուկը դպրոց է մտնում, ամէն հոդացողութիւն ու խնամք դպրոցի վերայ է ձգվում։

Հարկաւ շատ յաւալի արդիւնքներ են առաջ դալիս։

Մայրական պարտականութիւնները կանոնաւորապէս ու լիովին կատարելու համար մեր մայրերից շատերը չունին կրթութիւն թէ ընդհանուր և թէ մասնաւորապէս մանկավարժական։

Ընդհանուր կրթութիւնը մեծ նշանակութիւն ունի մայր կնոջ համար. նրանով կարող է քննական աչքով նայել ընթացիկ կեանքի երևոյթների վերայ, դիտակցաբար վերաբերուել ժամանակակից քաղաքակրթութեան զարդացման, որոշ ըմբռնել նրա յառաջադիմական հոսանքները և իւր դիրքը ընդհանուր մարդկային յառաջադիմութեան նկատմամբ որոշել։

Ընդհանուր կրթութիւնը նաև միջոց կը տայ նրան լաւ ու խելացի կերպով պարզելու իրեն կրթութեան նպատակը։

Երբ երեխայք մեծանում են թուլակազմ՝ մարմնով ու միևնոյն ժամանակ հոգով, ծնողները այս մի դժբախտութիւն են համարում, և այս երևոյթի պատճառը դերբնական։

Բայց ոչ երբէք։

Անտարակոյս կան մի քանի դէպքեր, որոնց պատճառը ժառանգականութիւնն է. բայց ընդհանրապէս պատճառը դաստիարակութեան անխոհեմ եղանակն է։

Մեծ մասամբ ծնողներն են պատճառ իրենց որդւոց տկարութեան, չարչարանքի ու դժբախտութեան։

Ցայտնի է, որ կամքի թուլութիւնը կամ փոփոխամտութիւնը մարդուս խոշոր տկարութիւններից մէկն է։

Այն-ինչ այսպիսի խնդրում՝ իսկ դաստիարակները խոշոր սխալներ են դործում։

Կեանքի մէջ յաճախ տեսնում ենք բարի ձգտումներով և վսեմ զդացմունքներով անձինք, բայց, աւաղ, զրկուած կամքի հաստատութիւնից և միշտ ուրիշների ազդեցութեան ենթարկուած։

Սնունդ այս կրաւորականութիւնը՝ վատթար դաստիարակութեան սխալ հետևանքը մեծամեծ վնասներ է հասցնում ինչպէս անհատ մարդուն, այնպէս էլ հասարակութեան:

Կեանքի ներկայ ժամանակի պահանջներն ի նկատի առնելով՝ ծնողները պարտական են հասատաուն ու բազմակողմանի դիտութիւն ունենալ՝ իրենց բարոյական պարտքը գոհացուցիչ կերպով կատարելու համար:

Ե.

Անտարակոյս՝ դաստիարակութիւնը մի բարդ գործ է. նա պէտք է համապատասխան լինի նաև ժամանակի պահանջներին, և անպատճառ ի նկատի պիտի ունենայ հասարակութեան քաղաքակրթական վիճակը:

Այսպէս՝ կարելի է ասել, թէ դաստիարակութեան նպատակն է մանուկի բնական ընդունակութիւնները զարգացնել այնպիսի ուղղութեամբ, որ նա առողջակազմ, երջանիկ ու բարոյական անձնաւորութիւն դառնայ:

Այս խնդիրը գոհացուցիչ կերպով իրականացնելու համար, ինչպէս արդէն ասացինք, անհրաժեշտ է դիտութիւն ունենալ, այն էլ բազմակողմանի դիտութիւն:

Բայց դժբախտաբար մեր մայրերից ու հայրերից շատերը տակաւին համոզուած չեն, թէ դիտութիւնը կարևոր ու անհրաժեշտ է:

Դիտական տեղեկութիւնները՝ այսպէս ասենք, գործնական տեղեկութիւնների ստուգութիւնը, լրացումն ու ընդհանրացումն է:

Գործնական տեղեկութիւններ իւրաքանչիւր ոք ձեռք է բերում անձնական փորձով կամ ուրիշների միջոցով, որոնք որ ունին:

Այն-ինչ դիտական ծանօթութիւններ միայն դիտութիւնն է տալիս և կարելի է ստանալ դրպրոցների, գրքերի, դիտական ընթացքների և այլ ուրիշ միջոցներով:

Այս դիտական տեղեկութիւնները հանվում են բազմաթիւ՝ լաւ կազմակերպուած, լիակատար փորձերից ու դիտողութիւններից:

Երեխային ֆիզիքապէս կանոնաւոր կրթելու համար անհրաժեշտ է պարզ ու որոշ հասկացողութիւն ունենալ օրգանիզմի բոլոր ֆունքցիաների մասին. իսկ այսպիսի տեղեկութիւններ գործնականապէս կարելի չէ ստանալ:

Մանուկի միտքը կանոնաւորապէս կրթելու համար՝ անհրաժեշտ է հոգեբանական օրէնքների դիտութիւն՝ որ նոյնպէս փորձառական դիտութեան սահմանից դուրս է:

Դիտական տեղեկութիւնների մի առաւելութիւն էլ այն է, որ ընդհանուր են, այսինքն դիտութեան հաստատած ճշմարտութիւնները գործադրելի են ոչ միայն այս կամ այն անհատ դէպքի վերաբերմամբ, այլ համանման բոլոր դէպքերի նկատմամբ. նրանք իրանց ոյժն են պահպանում ամէն ժամանակ և ամէն տեղ:

Գիտական տեղեկութիւնները ոչ երբէք մերժում են փորձառական ծանօթութիւնների կարեւորութիւնը. այս վերջիններն առաւել զօրանում կամ հերքվում են գիտութեան միջոցով։

Զ.

Որովհետեւ մեր առաջին հոգսը իւր որդու առողջութիւնը պիտի լինի, ուստի ամէնից առաջ պէտք է նա այնպիսի տեղեկութիւններ ունենայ, որ կարող լինի յաջողութեամբ կրթութեան այս առաջին պահանջն իրագործել։

Տակաւին չը յղացած և յղութեան ժամանակ կինը պէտք է քիչ-շատ զգոյշ լինի, որ գալիք մարդկային էակին վնաս չհասցնէ։

Նա պէտք է փոքր ի շատէ հմուտ լինի մարդկային կազմախօսութեան ու բնախօսութեան, և նոյնպէս առողջապահութեան այն մասին՝ որ յղութեանն է վերաբերում։

Մանուկ խնամելը նոյնպէս պահանջում է, որ մարդ տեղեկութիւն ունենայ մանկական հասակի առողջապահութեան, որ նոյնպէս սերտ կապուած է մարդկային կազմախօսութեան ու բնախօսութեան հետ։

Այս գիտութիւններն ինքնըստինքեան մեծ նշանակութիւն ունին, որովհետեւ անոնց միջոցով միայն հնար ունինք գիտակցաբար վարուելու մանուկի օրգանիզմի հետ։

Այս գիտութիւնները կօգնեն մեզ ճշտութեամբ վճռելու զանազան գործնական խնդիրներ, օրինակ՝ թէ երբ պէտք է երեխային նստեցնել, երբ և ինչով կերակրել և այլն։

Իսկ թէ որքան տղայք մեզ մօտ մեռնում են ծնողների տգիտութեան պատճառով՝ այդ ամէնքին յայտնի է։

Կարելի է շատ տպաւորիչներ բերել ցոյց տալու համար, թէ մայրը պարտական է առողջապահութեան հիմունքները գիտնալ. ահաւասիկ օրինակներ։

Մեր տղոց յաճախ կոկորդն է ցաւում, և գլխաւորապէս այն պատճառով՝ որ մայրերն անհոգութեամբ նրանց վիզն են փաթաթում թաշկինակ, շարֆ և այլն, այն-ինչ այս բոլորն աւելորդ է. վիզը պէտք է միշտ բաց մնայ՝ թէ ամառը և թէ ձմեռը։

Շատ օգտակար կը լինէր առաւօտ ու երեկոյ երեխայի վիզը լուանալ սենեակի բարեխառնութեան ջրով, կոկորդացաւի տրամադիր երեխայոց նաև ոտքը՝ դարձեալ նոյն բարեխառնութեան ջրով, միայն թէ վիզը լաւ պէտք է սրբել-չորացնել։

Անգլիացի երեխաների ոտները (սրունքները) ամբողջ տարի բաց են. այս խելացի սովորութիւնը Ֆրանսիա է անցել, և այժմ Ֆրանսիայում թէ հարուստի և թէ աղքատի տղայքը մինչև 12—15 տարեկան հասակները բաց սրունքներով են շրջում (կարճ դուլպայ են հագնում) և մինչև անգամ դպրոց գնում։

Մեր երկրի կլիման քիչ-շատ նման է Ֆրանսիայի կլիմային, (Անգլիայինը առաւել խիստ է), ապա ինչու մարմին պնդացնելու այս դեղեցիկ եղանակը քաղաքակիրթ ազգերից չառնենք:

Երեխայք կարող են այսպէս շրջել նախ սենեակում և ապա, հեռվհետ, նաև փողոցում: այսպէս նաև վեղ լուանալու վերաբերմամբ կարելի է նախ հաղիւ տաքկեկ ջուր բանեցնել և ապա կամայկամայ պաղ ջուր գործածել:

Ամէն մարդ պարտաւոր է կերակուր ուտելուց առաջ ձեռները լուանալ, ինչպէս և ուտելուց յետոյ բերանը ողողել (ցայել):

Արդեօք ամէ՞ն մայր ստիպում է իւր երեխային այս բոլորը կատարել. ապաքէն այս առողջապահական գործողութիւնները շատ օգտաւէտ են ամէն տեսակէտով. փնթիութիւնը միշտ վնասակար է:

Է.

Երեխայոց մտաւորապէս ու բարոյապէս կրթելու համար կարևոր է դիտնալ հոգեբանութիւն ու բարոյագիտութիւն:

Մանուկի հոգեկան յատկութիւնների զարգացումը կատարւում է բնութիւնից սահմանուած յայտնի կանոններով:

Հոբեբանական տեղեկութիւնների միջոցով դաստիարակը փոքր ի շատէ դաղափար կը կազմէ մանուկի ժառանգական յատկութիւնների մասին և կաշխատի նոյն յատկութիւնները գործադրել յօգուտ դաստիարակութեան:

Ժառանգականութիւնը մեծ դեր է խաղում դաստիարակութեան մէջ:

Շատ կարևոր է, որ դաստիարակը հիմնաւորապէս ծանօթանայ այս յատկութեան:

Մանուկի ժառանգական յատկութիւնների ծանօթութիւնը դաստիարակի համար մի առաջնորդող թել կը դառնայ դաստիարակութեան բազմատեսակ եղանակների մէջ:

Մայրը փոքր ի շատէ իմանալով իւր ու հօր յատկութիւնները, կարող է ժամանակին զանազան միջոցներ գործ դնել՝ լաւ յատկութիւնները զարգացնելու և վատթար հակումները տկարացնելու համար:

Հոգեկան յատկութիւնների ժառանգաբար անցումը մտաւոր ու բարոյական դաստիարակութեան մէջ նոյնքան մեծ նշանակութիւն ունի, որքան և ֆիզիկական յատկութիւնների ժառանգումը ֆիզիկական կրթութեան մէջ:

Թէ առաջին և թէ երկրորդ պարագայում նա մի եղակէտ է բազմատեսակ դաստիարակչական եղանակների համար:

Բարոյական դաստիարակութիւնը պէտք է հաստատուած լինի բարոյագիտութեան (էթիկայի) —բարոյականութեան գիտութեան վերայ:

Բարոյական դաստիարակութիւնն առաւել մեծ հոգայողութիւն ու գիտութիւն է պահանջում, և

գլխաւորապէս այն՝ որ ծնողներն իրենք չմեղանչեն բարոյագիտութեան սկզբունքների դէմ։

Ծնողներն իրանց վատ վարքով և կամ ագիտաբար խառնուելով մանուկի կեանքի մէջ՝ սովորաբար փճացնում են նրանց։

Ուստի բարոյական յաջողակ կրթութեան համար՝ մայրը իբրև դաստիարակ պարտական է ոչ միայն բարոյական սկզբունքները տեսականապէս գիտնալ, այլ և յաջորդաբար գործադրել նրանց իւր կեանքում։

Այդ սկզբունքները իւրացնելու համար պէտք է փոքր ի շատէ նախապատրաստութիւն, ընդհանուր կրթութիւն ունենալ. և որչափ որ այս նախապատրաստութիւնը ընդարձակ ու հիմնաւոր է, այնքան էլ լաւ է։

Թող ուրեմն իւրաքանչիւր մեր համար սուրբ պարտականութիւն լինի իւր անձի դաստիարակութեամբ և մտաւորական ինքնակրթութեամբ պարապելու՝ ընտիր գրքեր կարդալով։

Զաւակների դաստիարակութեան նկատմամբ մեծապէս օգտակար է, երբ ծնողները միասին են հաւաքվում՝ գոնէ հինգ-տասը հոգի, շաբաթը մի անգամ, և ընթերցանութեամբ, խօսակցութեամբ և այլ օգտակար գործով ժամանակ են անց կացնում։

Եթէ լինի ցանկութիւն, եթէ լինի գիտակցութիւն, թէ մանուկների դաստիարակութիւնը սուրբ գործ է—ապաքէն «մանուկների մէջ է ապագայ մարդկութիւնը», այն ժամանակ ոչ մի դժուարութիւն կարող չէ լինել։

Սթափուելու ժամանակ է. ամէն մի հայրենիքի համար հարկաւոր են օգտակար ու բարեկիրթ քաղաքացիներ։

Ը.

Արդի պայմաններում այն բոլոր տեղեկութիւններն, որ անհրաժեշտ կարևոր են որևիցէ մեր ունենալ զաւակ դաստիարակելու համար՝ ամենայարմարն է գրքերից ստանալ։

Գրքերի ժողովածուն—դա նոյն համալսարանն է։

Եթէ մէկը, ասում է Մակոլէյ, ինձ գերազանց թագաւոր դարձնէր, երբևիցէ ապրած, հոյակապ պալատներով, հրաշագեղ պարտէզներով, նուրբ կերակուրներով ու գինիներով, գեղեցիկ զգեստներով ու հարիւրաւոր ծառաներով, այն պայմանով միայն, որ ես չը կարդամ՝ ես չէի յօժարիլ թագաւոր դառնալ։

«Ես առաւել կյօժարէի վերնատունում (չարդախում) ապրող չքաւոր լինել բազմաթիւ գրքեր ունենալով՝ քան թէ թագաւոր, որ կարդալ չի սիրում»։

Երիտասարդական հասակում գրքերը մեր լաւագոյն առաջնորդներն են. ծերութեան հասակում նրանք մեզ զբաղեցնում են, նրանք մեր հոգսերն են թեթևացնում, մեր կրքերը սանձահարում։

«Իմաստութեան մատենադարանը,—ասում է Լեբրոկը,—ամէն տեսակ հարստութիւնից բարձր է,

և ոչ մի բան, որ կարող ենք մեկին յանկալ, կարող է նրան հաւասարուել:

Ուստի ամէն ոք՝ որ իրան նախանձայոյզ հեռևող է համարում ճշմարտութեան, երջանկութեան, իմաստութեան և մինչև իսկ հաւատքի՝ բնականաբար պէտք է գրասէր լինի:

Կրթութիւնը զպրոց աւարտելով չէ վերջանում: Հէնց այն ժամանակ է սկսվում հաղիւ:

Նա շարունակ տևում է մեր կեանքի բոլոր-զակ ընթացքում: Կրթութիւնն երբէք դադարելու չէ և մատենադարանը մեծերի դպրոցն է:

Գրքերն ամփոփում են իրանց մէջ անցեալ դարերի փորձառութիւնները, ամբարած գիտութիւնները:

Նրանք պատկերացնում են մեզ բնութեան հրաշալիքներն ու գեղեցկութիւնները. օգնութեան են հասնում դժուարին հանգամանքներում, մխիթարում, սփոփում են մեզ վշտերի ու տառապանքների մէջ. հարստացնում են մեր միտքը գաղափարներով և մեզ մեր աչքում բարձրացնում:

Գրքեր՝ ինչպէս և բարեկամ ընտրելը մի ծանրակշիռ խնդիր է:

Կան գրքեր, որոնց կարելի չէ մինչև անգամ գիրք կոչել, և սրանց ընթերցումը ժամանակի կորուստ է, իսկ մի քանիսն էլ այնքան վնասակար են, որ ընթերցողին պղծում են. եթէ մենք մարդիկ լինէինք, մենք պարտական էինք դուրս վռնտել:

Ոչ ոք կարող չէ մի ժամ անգամ լաւ գիրք կարդալով՝ աւելի լաւ ու երջանիկ զգալ իրան և այն էլ ոչ թէ միայն հէնց այդ բոպէին. ընտիր գիրքը յիշատակ է թողնում մեզ ընտիր ու յաջողակ մտքերի պաշար, որոնց կարող ենք միշտապէս դառնալ՝ երբ և կամենանք»:

Անգլեացի փիլիսոփայ Լեբբոկի այս բոլոր դատողութիւնների վերայ երբէք չէ կարելի տարակոյս յայտնել:

Թող դասատիրակներն օգտուելով գիտութեան կրթիչ զօրութիւնից՝ առողջ իմացականութիւն ու ճշմարտութեան սէր զարգացնեն իրանց աշակերտների մէջ, և այս ճանապարհով ապագայ սերունդի բարքն աղնուացնեն:

Դժբախտաբար գիտութիւններ ստանալու այս աղբիւրից մենք տակաւին շատ սակաւ ենք օգտվում: Մեզնից շատերը դեռ ևս ընթերցասիրութեան վարժուած չենք:

Թ.

Թող մեր խօսքերն այնպէս չհասկացուին, որպէս թէ մենք պահանջում ենք, որ ծնողներն ու դասատիրակները մատնաւորապէս այս գիտութիւններով պարապեն:

Այսպիսի մի պահանջը նոյնքան անմիտ կը լիներ, որքան և հաստատելը, թէ մանուկի ֆիզիքական կրթութեան համար անհրաժեշտ է մատնադիտորէն իմանալ կազմախօսութիւն (անատոմիա)

և բնախօսութիւն (ֆիզիօլոգիա. յանկալն նախապատրաստութիւն ասելով պէտք է հասկանանք դիտական պարզ հայեացք ունենալ առարկաների վերայ. օրինակ՝ դաստիարակը պէտք է հասկանայ մանուկի կեանքի նկատմամբ մաքուր օդի, սննդարար կերակուրների, խառն կերակուրի, մարմնական շարժումների և այլն նշանակութիւնը:

Մայրը ուսումնասիրելով հոգեբանութիւնը այն համոզմունքն առաջ պիտի բերէ, թէ հոգեկան կեանքի երևոյթներն որոշ բնական օրէնքների են ենթակայ, թէ նրանց մէջ ոչինչ գերբնական չկայ:

Գիտնականօրէն մշակուած հոգեբանական հայեացքը երբէք կարող չէ հաշտուել պէս-պէս սնոտիապաշտութիւնների հետ:

Երբ վերջապէս երեխայք գրել-կարդալ են սկսում, այն ժամանակ առաջ է գալիս նրանց բանիմաց ընթերցանութեան խնդիրը:

Այս խնդրին պէտքին պէս վերաբերուելու համար հարկաւոր է, որ ծնողները ծանօթ լինին մանկական գրականութեան:

Դաստիարակութեան գործը դժուարանում է ոչ միայն ժամանակիս կուլտուրական կեանքի բարդութեան պատճառով, այլ և նրա բազմատեսակ բացասական կողմերով:

Դաստիարակը ոչ միայն պէտք է հոգայ իւր սանիկի հոգու դրական յատկութիւնները մշակել, այլ և խնամք պէտք է տանի՝ տալու նրան այնպիսի միջոցներ, որոնցով կարող լինի պաշտպանել իւր անձը պէտքս տխտերից ու վնասակար սովորութիւններից:

Ի հարկէ՝ լաւ դաստիարակուած անձնաւորութիւնը կարիք չունի պաշտպանութեան. նա ինքնին կարող կը լինի պաշտպանել իւր անձը ամէն տեսակ անբարոյականացուցիչ իրերից:

Կան սովորութիւններ, որոնք հարևանցի տեսութեամբ մեզ անվնաս են թուում, այն-ինչ նրանք շատ կարիքների ու թշուառութիւնների պատճառ են դառնում, օր. արբեցութիւնը, ծխելը, սեռական սանձարձակութիւնը և այլն (ծխելն ու արբեցողութիւնը պէտք է բացէ ի բաց վռնտել մարդկային կեանքի պէտքերից):

Շատերը ադիտաբար թէթև աչքով են նայում այն խիստ մտերմական յարաբերութեան, որ սովորաբար այր մարդիկ մինչև իրանց ամուսնանալը ունենում են որոշ կարգի կանանց հետ:

Ծայրագոյն յանցանք են գործում ծնողները՝ երբ անտարբեր աչքով են նայում դաստիարակութեան այս ամենամեծ խնդրին:

Ո՞րքան պատանիներ բարոյապէս ու ֆիզիկապէս ընկնում են միմիայն այն պատճառով, որ ծնողներն ու դաստիարակները, մանուկների անհատականութեան զարգացման ամենածանր բոպէին, բոլորովին անխնամ են թողնում նրանց (թէ աղջիկներին) և չեն հասկացնում նրանց իրանց օրգանիզմի նորածին գործառնութիւնը (ֆունքցիա):

Ամոդ սերունդի խելացի դաստիարակութիւնը այստեղ առաւել ևս մեծ դեր է խաղում:

Ժ.

Այժմ դառնանք առօրեայ կեանքին և կանգ առնենք այն ընդհանուր երևոյթի վերայ, որ ժամանակակից հասարակութիւնը մեծ մասամբ բարոյական այլ պահանջներ է անում աղջիկներից ու կռնանցից և այլ՝ երիտասարդներից ու այր մարդկանցից:

Տղամարդիկ իրաւունք ունին դայթակղեցնելու, և նրանց այս գործի համար չեն դատապարտում: Կանայք իրաւունք չունին դայթակղուելու, ապա թէ ոչ հասարակութիւնից կը մերժուին և անարգանքի ղրոշմ կը դրուի նրանց վերայ:

Մեծ ամօթ, նախատինք, անբարոյականութիւն է համարվում, երբ աղջիկը կուսութիւնն է կորցնում ամուսնանալուց առաջ, բայց միևնոյն գործը անարգանք չէ այր մարդու վերաբերմամբ:

Ո՞րտեղից է արդեօք առաջ գալիս բարոյական պահանջների այս երկուութիւնը:

Հիմնուել այն բանի վերայ, երբև թէ մարդկային բնութիւնն յուզող կրքերն անընկճելի են, թէ ժուժկալութիւնը կորստաբեր աղդեցութիւն ունի մարդկային առողջութեան կամ երկարակեցութեան վերայ, հիմնուել այս փաստերի վերայ անմտութիւն է, որովհետև ժամանակակից բժշկականութիւնը իւր նշանաւոր ներկայացուցիչների

բերնով հերքում է այդ սխալ հայեացքը, որ իսկապէս անառակութիւնն արդարացնելու մի պատրուակ է:

Բժշկական դիտութիւնը բոլորովին հակառակն է հաստատում:

Նրա պահանջները կատարելապէս համաձայն են և կրօնքի պահանջներին և բարոյագիտութեան (էթիկայի) հիմնական օրէնքին, թէ բարոյական սկզբունքները նոյն և մի պիտի լինին երկու սեռի անձինքների համար էլ:

Աղդերի մտաւոր զարդացման յառաջխաղացութեան չափով պէտք է որ հետզհետէ անհետանան վերոյիշեալ նախապաշարմունքները:

Եւ թէև ներկայ ժամանակում՝ Հնդկաստանի մի քանի տեղերում, այրի կինը իւր մեռած մարդու հետ չի այրվում, բայց և այնպէս աշխարհի աչքից կարծես պատանդվում է նա:

Նա պատանդվում է քաղաքացիական մահուան. նրան խիստ արդելվում է երկրորդ անգամ ամուսնանալ, և հետը հաղորդակցութիւն ունենալը պղծութիւն է համարվում:

Ի հարկէ՝ մինչև այժմ մի օրինակ անգամ եղած չէ, որ օրիորդի կամ կնոջ մահուան առիթով մի այր մարդ այրուի:

Այսպէս էր կնոջ վիճակը երկանը մեռնելուց յետոյ. նրա կենդանութեան ժամանակ էլ այր մարդու «սեռական արտօնութիւնները» պահպանվում էին ոչինչ պակաս զարհուրելի օրէնքներով:

Այր մարդու ամուսնական անհաւատարմու-

թիւնը կնոջը բողոքելու ամենաչնչին իրաւունք անգամ չէր տալիս։

Իրաւունք է անառակ կանանց քարկոծելը, բայց անառակ աղամարդոց—ոչ երբէք։

Պարզ է, որ մի այսպիսի բարոյական սկզբունք, որ երիտասարդի ողջախոհութեան կորստի վերայ զեղծող աչքով է նայում և կամ արդարացնում է, անցեալից ժառանգուած մի խայտառակ նախապաշարմունք է։

Մայրն ու դաստիարակը պարտական են եռանդով մաքառելու այս անմիտ նախապաշարման դէմ, եթէ միայն նրանց համար թանկ է ամող սերնդի բարոյական կեանքը և մարմնական առողջութիւնը։

Ապաքէն յաճախ ողջախոհութեան խախտումը պատժվում է սիֆիլիսով և վեներական ծանր հիւանդութիւններով, որոնք մարդկային օրգանիզմը քայքայում են և մարդկութիւնը այլասերում։

Սեռական խնդրի մէջ պէտք է միշտ առաջնորդող լինի այս սկզբունքը—թէ՝ «ողջախոհութեան կորսնցնելը չամուսնացած երիտասարդի համար ևս նոյնքան ամօթալի ու անբարոյական է, որքան և աղջկայ համար»։

ԺԱ.

Եթէ չհաշուենք պղտառնական սերը (որ բառնանց անզոյ, պատիր բան է) և կանգ առնենք միմիայն սովորականի վերայ, կը տեսնենք, որ նա տարբեր է երկու սեռերի մօտ։

Պրոֆ. Սիկորսկու ասելով՝ «Այր մարդիկ աւելի յայտնի են առաւել զօրաւոր ֆիզիքական պահանջներով, ուստի և սիրում (զգում) են զգայականութիւն և իրանց սիրոյ մէջ շատ անգամ առաջնորդվում են կնոջ արտաքին արժանիքներով։

Իւր սիրոյ մէջ այր մարդն աւելի վճռական ու բուռն է. բայց և այնպէս սէրը նրա հոգին բովանդակապէս չէ լեցնում։ Ժամանակ-ժամանակ տեղի կը տայ ուրիշ կենսական ու հասարակական խնդիրների։

Այսպէս չէ կնոջ սէրը։

Երբ մասնաւորապէս կանոնաւոր կերպով է զարգացած և լաւ դաստիարակուած՝ նրա զգայականութիւնը առաւել թոյլ կը լինի, քան թէ այր մարդունը։

Կնոջ սիրելու պահանջն աւելի մեծ է, տևական է և միանգամայն նրա սէրը աւելի հոգևոր է քան թէ զգայական, հեշտական։

Այր մարդը նախ և առաջ կին է սիրում, ապա իւր որդւոց մօրը. իսկ կնոջ գիտակցութեան մէջ առաջին տեղը բռնում է իւր երեխաների հայրը, ապա իւր ամուսինը։

Մայր դառնալով՝ կինը իւր սիրուն բաժնեկից է անում իւր երեխաներին ու մարդուն։

Մայրական սիրոյ առաջ զգայականութիւնն անհետանում է և այնուհետև կինը ամուսնական կենակցութեան մէջ իւր մարդու սիրոյ ու մտեր-

մութեան աւելի ապացոյցներն է գտնում, քան թէ զգայական հաճոյք:

Կինը բոլոր հոգւով է սիրում:

Նրա համար սէրը—կեանք է. այր մարդու համար՝ սէրը—կեանքի հաճոյք:

Դժբախտ սէրը այր մարդուն խոցում է, իսկ կնոջ կեանքն է արժում, կամ թէ կեանքի երջանկութիւնը:

Այր մարդը ենթարկվում է կնոջ ազդեցութեան, և այդ ազդեցութիւնը, այդ կախումը այնքան աւելի է, որքան թոյլ է նա, որքան որ զգայական է»:

Երկու սեռերի հոգեկան յատկութիւնների այս բնորոշութիւնը ցոյց է տալիս, թէ իդէալի հասնելու համար որքան կարևոր է, որ մարդս խոյս տայ զգայականութիւն, հեշտասիրութիւն զրգռող ամէն տեսակ բաներից, և թէ որքան անհրաժեշտ ու օգտակար է, որ նա ձգտի իւր զգայնականութիւնը ստանձնահարելու:

Այստեղ ցոյց է տրվում, թէ անհրաժեշտ է ընդարձակութիւն ու զարգացումն տալ մարդկային բնութեան քնքոյշ ու ազնուազոյն կողմերին, որոնք շատ հեշտ կերպով խլանում են զգայականութեամբ՝ մանաւանդ երիտասարդութեան տարիներում:

Մայրը կամ դաստիարակը մի՞թէ կարող է դիտութեան այս դանձերը անկատ թողնել:

Ամենի զգացման պատշաճաւոր զարգացումը մեծագոյն նպաստում է սիրոյ մինչև իդէալական զրութեան բարձրանալը, և մարդուս բնութեան հաղորդում է իդէալականութեան ու ազնութեան այն նրբութիւնը, որ գնահատել գիտէ ազնիւ մարդոց կարծիքը և մաքուր խղճմտանքի պահանջները:

Որպէսզի սեռական կեանքն միշտ մարդկային մնայ և անասնականութեան չհանի՝ ամենախաղութեան զգացման բոլոր ոյժովը պէտք է պահպանուի. այս են մեզ հաստատում մեր ժամանակի զրեթէ բոլոր մեծ մտածողներն ու բժիշկները:

Ժուժկալութիւն պահպանելը մի պայման է, որ կամքի զարգացմանն է նպաստում:

Մաքառելով զարգացող զգայականութեան հետ և զսպելով սեռական բնազդի նման մի հզոր բնազդ՝ մենք ամենալաւ կերպով նպաստում ենք կամքի զարգացմանն ու կազմակերպուելուն:

Երեխայի կամքը հեշտահեաւ զօրանում է քաղցի, երկիւղի, բարկութեան և այլ այսպիսի զգացումների ազդեցութիւնը զսպելու փորձերով:

Սուր բնազդների դէմ մղուած այս պատերազմը միաժամանակ նպաստում է թէ կամքի զարգացման և թէ այդ բնազդների կանոնաւորութեան:

Այս մաքառումը արհեստական բան չէ. նա մի բնական երևոյթ է, որ իրերից բնականաբար առաջ է գալիս. նա մարդկային զարգացման կանոնաւոր գործողութեան (պրոցես) արտայայտութիւնն է:

Այդ մաքառումն ակնյայտնի կերպով է երևում, երբ պատանին կանոնաւոր կերպով է զարգանում:

Երիտասարդը բոլոր ոյժով անդադար կռվում է յուղիչ կրքերի դէմ. մաքառումը մեծ աջողութեամբ առաջ է մղվում. բայց ահա ընկերային կերուխում, ուժերը տկարանում են և—երիտասարդը ընկնում է։

Այս ամէնն անշուշտ արտայայտվում է այդ մարդու բնաւորութեան վերայ՝ տալով նրա հոգուն այն չափազանց կոպիտ զգայականութիւնը, որ դարձնում է նրան միանգամայն թէ անզուսպ և թէ անողոք, և որը կարող է ամուսնական կեանքի մէջ խռովութիւնների մշտական աղբիւր դառնալ։

ԺԲ.

Ամուսնական կեանքի մէջ ճշմարիտ երջանկութեան հասնելու և կատարեալ անկախութիւն—անկախութիւն ստորաքարշ կրքերից—ձեռք բերելու համար պէտք է երիտասարդը վաղօրօք ու խոհեմութեամբ զգայականութիւնը զսպէ։

Դաստիարակութեան արդի եղանակները,—ասում է պրոֆ. Տառնովսկին,—թէև ընտելացնում են մանուկին մտաւորական աշխատանքի, զարգացնում են նրա մէջ արդարադատութեան ու ճշմարտութեան սէրը, թէև տալիս են նրան բազմաեռակ դիտութիւններ, բայց և այնպէս շատ սակաւ են խնամք տանում վաղօրօք նրա սեռական զգայնականութիւնը զսպելու, և ամենևին չեն սովորեցնում նրան դիտակցաբար կռուելու հեաղհեաէ ղօրացող սեռական առփանքի հետ, որ երբեմն դաստիարակութեան միջոցով իսկ արուեստաբար ղրդռվում է։

Ծնողների սուրբ պարտքն է յորդորել իրենց որդոց, որ սեռական ժուժկալութիւն պահպանեն. ուստի և պարտական են նրանցից հեռացնել այն ամէնը, որ կարող է նրանց սեռական առփանքը զրդռել։

Հարկաւոր է խելացի դաստիարակութեան միջոցով պատանիներին այնպիսի դրութեան մէջ դնել, որ կարող լինին յաջողութեամբ ածող զգայականութեան հետ մաքառելու։

Անհրաժեշտ է նոյնպէս պատանիներին բացատրել, թէ խիստ ժուժկալութեան շնորհիւ որքան շահվում են, որքան անտարատ ու ամբողջ կը մնայ իրենց հոգևոր զարգացումը, իրենց հոգևոր դերազանց ուժերի ներդաշնակ ածելութիւնը։

Բայց ի՞նչ ենք տեսնում կեանքի մէջ։

Ծնողները շփոթուած դիմում են բժշկին խորհուրդ հարցնելու, թէ ժամանակ չէ՞ արդեօք, որ իրենց զաւակը մերձաւորութիւն ունենայ, որովհետև նրա դլուխն է ցաւում, ծանր է, դիւրագրգիռ է դարձել, քնից զրկուել է և այլն։

Եթէ ծնողներն ու դաստիարակները կատարեալ հասկացած լինէին իրենց կոչումն, այսպիսի դէպքերում մեծ աջողութեամբ կաշխատէին որ մանուկի կեանքը կանոնաւորապէս բաշխուած լինի, որ աշխատանքի ու հանգստեան ժամերը կանոնաւորապէս իրար փոխանակեն,

որ ֆիզիքական մարզումներ ու շարժումներ կատարել նա մաքուր օդի մէջ՝ գործ դնելով միանգամայն և սառը ջուր.—այս ամէնը դեղեցիկ արդիւնք ու կատարեալ առողջութիւն կը տայ:

Այսպիսի հանգամանքները պարզապես ցոյց են տալիս, թէ որքան կարևոր ու օգտակար է, որ մայրերն ինքնակրթութեամբ ու ինքնազարգացմամբ զբաղուին:

Պարզ ճշմարտութիւն է և ապացոյցի կարօտ չէ, թէ մենք բարոյապէս պատասխանատու ենք մատաղ սերունդի ախտերի ու պակասութիւնների զարգացման համար:

Եւ ահա որչափ որ այժը, մեր դիտութիւնը թոյլ է տալիս, պէտք է աշխատենք մեր դաստիարակչական պարտականութիւնները իրագործ կատարելու:

Կեանքի հիմնական օրէնքների դիտութիւնն ու հասկացողութիւնը ամէն տեսակ բարոյական զարգացման լաւագոյն հիմունքն է:

ԺԳ.

Մեր ինքնակրթութիւնը շատ հանգամանօրէն ու լիակատար պէտք է լինի, որպէսզի կարողանայ պէտքին պէս իւր ծնողական պարտականութիւնները կատարել:

Այն առարկաները, որ կին-մայրը բաւականաչափ պէտք է իւրացնէ, երկար ու կանոնաւոր աշխատանք են պահանջում:

Այս ինքնակրթութիւնը սկզբում դժուար է երևում, բայց յետոյ, երբ կարդալու սէրը հետզհետէ զօրանայ, դիտութիւններն աւելի հեշտութեամբ են իւրացվում և դեղեցիկ արդիւնքներ առաջ բերում:

Այս դեղեցիկ նպատակին հասնելու համար պէտք է ցանկութիւն և ամուսնական խաղաղ ու երջանիկ կեանք—ամուսնութիւն «ի սիրոյ» և ոչ շահախնդրութեամբ:

Մեր դաստիարակչական պարտականութիւնը երեխային դպրոց մտցնելովը չէ վերջանում: Նա պիտի շարունակուի մինչև որ մանուկը չափահաս դառնայ:

Հարկաւ՝ պատանեկական հասակի դաստիարակութիւնը ճնշող խնամակալութեան բնաւորութիւն ունենալու չէ, այլ պիտի լինի չափազանց մտերմական, և մայրը միմիայն ամենակարևոր դէպքերում պէտք է միջամտէ պատանու կեանքի մէջ. Նա պէտք է դիտակցաբար ու խոհեմութեամբ առաջ տանէ իւր զաւակի վարք ու բարքի դաստիարակութիւնը:

Այս ժամանակ պատանուն ծանր չի թուայ մօր միջամտութիւնը:

Բայց կեանքի մէջ՝ երբ որդուց դպրոց են տալիս, այնուհետև շատ սակաւ են խնամք տանում ծնողներն իրենց որդուց դաստիարակութեան վերայ:

Այն-ինչ այս ժամանակն էլ, ինչպէս ասացինք, պէտք է ծնողներն եռանդով խնամք տանեն իրենց

զուակների ֆիզիքական ու բարոյական դաստիարակութեան։

Երեխայոց դպրոցական կեանքումն էլ են կազմակերպվում սովորութիւններ, կամք ու բնաւորութիւն։

Դաստիարակութեան հոգսը միմիայն դպրոցի վերայ չէ կարելի ձգել. նրան դժուար է այս գործը առաջ տանել։

Դպրոցն իւր նպատակներն ունի, և յատկապէս մտաւոր կրթութիւնը. գլխաւորապէս ընտանիքը պիտի դաստիարակէ, և միայն կարևոր դէպքերում պիտի դպրոցն այս ընտանեկան դաստիարակութեան պակասը լրացնէ։

Մանկութեան առաջին տարիներում երեխաներին պէտք է աւելի շատ ազատութիւն տալ. թող մանուկները խաղաղ անցնեն իրենց կեանքի այս շրջանը. պէտք չէ բնաւ նրանց ուրախութիւնը խանգարել և անհանգստացնել նրանց սառն դատողութեամբ՝ խառնուելով նրանց հեռաքրքրող իրերի մէջ։

Մանկութիւնն իւր առանձին պարագաներն ունի և նրա մասին կարող ենք դատել միմիայն իւր սեփական օրէնքներով։

Նախ և առաջ երեխայի վերայ պէտք է նայել իբրև երեխայի, և ոչ թէ իբրև ապագայ հասուն մարդու վերայ։

Շատ կարևոր է և մինչև անգամ պէտք է նպաստել, որ երեխաները երեխայ լինին, այսինքն ապրեն երեխայի պէս, և այս չպէտք է խանգարուի ոչ հոգսերով, ոչ զրկանքներով և ոչ նեղութիւններով։

Այս կերպով հոգեկան ու մարմնական ոյժ կը ժողովուի ապագայ զարգացման համար։

Այլ և կարևոր է, որ երեխայից պահանջուած աշխատանքը կարելոյն չափ նրա սեպհական աշխատանքը լինի, որպէսզի կարող լինի նա իւր սեպհական ոյժերի գործադրութեան հաճոյքը լիապէս ճաշակել։

ԺԴ.

Դաստիարակը հաշիւ պէտք է տեսնէ նաև ժառանգականութեան ու միջավայրի ազդեցութեան հետ։

Այժմ արդէն հաստատուած իրողութիւն է, որ ժառանգաբար աւելի վատթար քան թէ լաւ յատկութիւններն են հաղորդվում, և դաստիարակը պէտք է շատ աշխատանք թափէ ժառանգական վատթար հակումներն ոչնչացնելու և նրանց փոխանակ ընտիր և լաւ հակումներ հաստատելու համար։

Որչափ որ մարդիկ դաստիարակութեան նկատմամբ անփոյթ դտնուին, այնչափ էլ ընդարձակօրէն պիտի տարածուին վատթար յատկութիւնները և ժառանգականութեան միջոցով հաստատուին նրանց մէջ, որոնց հետ մոքառելը պիտի դժուարանայ։

Այս իսկ պատճառով հէնց այժմ պէտք է սկսել մարդուս բարոյական յատկութիւնների դէմ

մաքառել. և որչափ այս մաքառումը շուտ սկսուի՝ այնչափ էլ լաւ է։

Դաստիարակութեան միւս թշնամին վատ միջավայրն է. նա մանուկներին ու պատանիներին տալիս է վատթարութեան օրինակներ։

Այն անբարոյական գործերը, որ սովորաբար մեծերը կատարում են երեխաների առաջ՝ կանոնաւոր բարոյական դաստիարակութեան ընթացքը արգելը են հանդիսանում։

Այս իսկ պատճառով դաստիարակութեան գործը թեթեւացնելու համար պէտք է բարւոքել միջավայրը, աղնուացնել հասարակական բարոյականութիւնը։

Կին-մայրերը, օրիորդները — ապագայ մայրերը, որոնց վերայ հէնց ինքը բնութիւնը դրել է այս պարտականութիւնը կատարել՝ այսինքն դաստիարակել, դիտութեամբ զբաղաւորուած պէտք է մտնեն դաստիարակութեան գործին։

Ինչպէս արդէն ասել ենք, այսպէս կոչուած ծնողական շրջանները կարող են մեծամբ հեշտացնել դաստիարակների ինքնակրթութիւնը։

Շատերի միտքն աշխատութիւնը մեկ ուղղութեամբ աւելի արդիւնաւէտ կը լինի. այլ և ծնողական շրջաններում հաստատուած մտաւորականը միջոց կը տայ տակաւ ծախսեր անելով՝ ծանօթանալ կարևոր գրքերի ու ամսագրերի հետ. էլ չենք խօսում այսպիսի շրջանների բարոյական կապի նշանակութեան մասին։

Կանոնաւորապէս սահմանուած դաստիարակութիւնը անհատի կեանքում կարող է բարոյական շատ տանջանքների առաջն առնել։

Միմիայն դաստիարակութեան ու մտաւոր զարգացման միութիւնը կարող է երջանիկ կեանք ստեղծել։

Եւ ընդհակառակն, անխնամ դաստիարակութիւնը շատ տառապանքների հող է պատրաստում, որ հասարակութեան մէջ մեր շուրջը շատ յաճախ ենք տեսնում։

Եւ մի՞թէ մեր մէջ փոքր ի շատէ դաստիարակուած շատ երեխաներ կան թէ հարուստ ծնողներից և թէ աղքատների որդւոց մէջ։

Այդ մի խումբ բախտաւորներն էլ կորչում են ոնթիւ, ոչ մի տեղ չկրթուած, կամ աւելի ևս վատը՝ ախտերի, արբեցութեան, բռնութիւնների և ամէն տեսակ այլանդակութիւնների մէջ, լոյսից ու օդից զուրկ արհեստանոցներում կրթուած։ (Մեր «յայտնի» թշուառ որբերի մասին չենք խօսում)։

Ուր աշխատանքը, այդ մեծ հրահանգիչ, կրթիչ սկզբունքը, տանջանք է դառնում՝ անչափահաս բանուորների ֆիզիքական ուժերը բոլորովին քամող, ուր հանգստութեան մի քանի ժամերն էլ նրանց բարոյապէս ապականելու և անսանձ անառակութեան մէջ գլորելու են նուիրւում։

Հասարակական անտարբերութեան այս անմեղ զոհերի, այս ապագայ յանցաւորների, արբեցողների համար ֆիզիքական դաստիարակութիւնը գոնէ

կարճ ժամանակ, գոնէ միմիայն տօն օրերին (կիրակնօրեայ ու տօնական հանդիսաներին) ոչ միայն անհրաժեշտ է, այլ և փրկարար միջոց է հանդիսանում:

Մի որևիցէ մանուկի՝ որ մի ամբողջ շաբաթ ղլուխը ծռած անշարժ նստած է աշխատանքի վերայ, մի երեխայի՝ որ միշտ ներշնչում է այլ և այլ միաղմներով ապականուած օդ, որ մաշվում, հեծում է վատ կերակուրներով ու ծեծով, մի այսպիսի երեխայի ամէնից առաջ անհրաժեշտ է մաքուր օդ, շարժում, մի շրջան՝ որտեղ կարող լիներ գոնէ առ ժամանակ սթափուելու, թարմանալու, փոքր ի շատէ ոյժ հաւաքելու հետևեալ շաբաթուայ ուժասպառիչ, դառն աշխատանքի համար:

Մանկական խաղեր սարքելը մեծ օգուտ կարող է տալ:

Բախտից առանձնաշնորհութիւն վայելող երեխաներին այսպիսի խաղերը մեծապէս կազդուրում են, իսկ բոլորովին լքուած ու որբ երեխաների ոչ միայն մարմինը, այլ և հոգին են փրկում:

Այդ խաղերի ժամանակ մանուկների հետ խօսակցելով կարելի է ծանօթանալ նրանց բարոյական յատկութիւնների, նրանց նիստ ու կացի հետ, և եթէ այս ու այն կողմի նկատմամբ որևիցէ անախորժ կէտ նկատուի, պէտք է աշխատել, որ նրանց բարոյական կամ նիւթական վիճակը բարուոքուի:

Երեխաները բնականաբար իրանց ղգալով կատարեալ ազատութեան մէջ և տեսնելով իրանց առաջնորդների սիրալիր յարաբերութիւնը իրենց

հետ՝ կը բանան նրանց առաջ իրանց սիրտը, ազատութեամբ կը լսեն նրանց պարզ ու դրաւիչ խօսքերը և անղգայաբար կ՚ընդունեն նրանց քարոզած բարոյական սկզբունքները, տեղեկութիւններն ու ցուցմունքները, որոնց մասին, եթէ չը լինէին կիրակնօրեայ խաղերը, նրանք երբէք և ոչ մի տեղ չէին կարող դաղափար ստանալ:

Մանկական խաղերի բարոյակրթիչ մեծ նշանակութիւնը վաղուց են դնահատել ու ճանաչել առաջնակարգ մտածողները:

Զուարճալիքների միջոցով կրթելը միանգամայն մանուկների սրտերի մէջ մտցնում է սէր դէպի այն բանը, որ հասնում հասակում իրանց պարտականութիւնները կատարելու ընդունակ է դարձնում նրանց:

Խաղերի միջոցով կարելի է ստստիկ ազդել մանուկների կազմակերպուելիք բնաւորութեան վերայ:

«Խաղերը,—ասում է Լադրանժ,—առողջապահական միջոցներ են մեր ժամանակի երկու ամենանշանաւոր սխտերի դէմ—չափազանց դիւրազդայնութեան ու կամքի թուլութեան դէմ:

Խաղերին մասնակցողները հետզհետէ սովորում են իրանց եսասիրական հակումները թողնել և կամաց-կամաց ընկերական համերաշխութեան ղդացումով տոգորուել»:

Խաղերի ժամանակ մանուկների մէջ մարդոց՝ իբրև ընկերութեան անդամների, պարտականութեան ու իրաւունքի դաղափարն է կամաց-կամաց ղարդանում:

Սմենքը մեկի և մեկը ամենքի համար—հասարակական կեանքի այս գեղեցիկ սկզբունքը իւր հաստատութիւնն է ստանում մանուկների միաբանական խաղերի մէջ:

Նմանողութիւն, մրցութիւն, ընտրական սկզբունք, գիտակցական հնազանդութիւն խիստ կարգերի, կարգաւորութեան ու կամաւոր կարգապահութեան ձգտումը—հասարակական զարգացման այս բոլոր շարժիչները՝ խաղերի մէջ մեծ կրթիչ դեր են խաղում:

ԴԱՐՁԵԱԼ ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ

Ա.

«Պէտք է հաւատալ, թէ ամէն մի սովորող անշուշտ լաւ մարդ կը դառնայ»:

«Մանկավարժական այս համառօտ դրոյցները ամբողջացնելու համար խօսենք նաև միւս ազգերի ընտանեկան դաստիարակութեան և այս անդամ գերմանականի վերայ:

Այս մի քանի խօսքերն էլ կարող են շատ օգտակար լինել մեր մայրերին ու հայրերին:

Գերմանական ազգի հոգևոր կեանքի հիմնական գիծը, առանց որևէ տարակուսի, դրաղիտութիւնն է:

Այդ հիմնական գիծը, իբրև մի կարմիր թել երևում է նրա բոլոր գործունէութեան մէջ և նրա պարծանք ու փառքն է կազմում:

Գրականութեան ու գիտութեան բոլոր գանձերը այս հաղորդիչ—դրաղիտութեան—շնորհիւ բոլոր ազգի սեփականութիւնը դարձան. նրանք մինչև իսկ ամենախուլ անկիւնները մտան, ինչպէս ասում է Բռէյտֆուսը:

Գերմանական ժողովրդի ինքնաճանաչութեան զարթնելու գլխաւոր գործօնը ազգային դպրոցն է հանդիսանում:

Սմէն ծնող պարտական է իւր որդուն 6 տարեկան հասակից դպրոց ուղարկել:

Այստեղ շատ կամ սակաւ հարուստ միջին դասակարգի երեխաները մտնում են միմիայն 9—10 տարեկան հասակը և ապա անցնում են միւս դրպրոցները. իսկ ստոր դասակարգի երեխաները մտնում են մինչև 14 տարեկան հասակը և այստեղ էլ իրանց ուսումն աւարտում:

Այնուհետև այս երեխաներին տալիս են իբրև աշակերտ արհեստաւորների մօտ արուեստներ սովորելու, պարտիզպանների, կաթնատնտեսների մօտ և այլն և այլն. իսկ աղջիկներին՝ համապատասխան արհեստագիտական դպրոցներ կամ ընտանիքներ:

Գերմանիայի ժողովրդական դպրոցը բացի իւր զարգացուցիչ կողմից՝ անշուշտ ունի և մեծ դաստիարակիչ նշանակութիւն. նա հաստատում է իւր մատաղ սանիկների սրտերի մէջ գործունէութեան, աշխատանքի սէր, պարտականութեան գիտակցութիւն, քաղաքացիական կեանքի սաղմեր և այլն այլն

Ուսուցիչը կամ ուսուցչուհին հսկում է երեխաների մաքրասիրութեան, կարգապահութեան ու ճշտակատարութեան վերայ, նայում է որ քաղաքավարի լինին, ուսուցանում է մարմնամարզութիւն ու խաղեր. իսկ աղջիկներին այս բոլորից զատ՝ սովորեցնում է նաև ամէն տեսակ ձեռագործութիւն ու անարարութիւն:

Գերմանիայի մէջ ամէն մի փոքրիկ դպրոցական գիտէ իւր հայրենիքի պատմութիւնը, գիտէ նրա լուսազոյն էջերը, նրա հերոսները և բոլոր հոգւով սիրում է իւր հայրենիքը:

Գրականութիւնը, մայրենի լեզուն, աշխարհագրութիւնը այնքան են ծանօթացնում մանկանը իւր հայրենիքի հետ, որ նա իւր հայրենիքով գիտակցաբար պարծենալ կարող է:

Լուսաւորութեան պտուղներն երևում են ամէն կողմից. քաջառոգ ու ֆիզիքապէս զարգացած ժողովուրդ, չարքեցող, սնապաշտութիւններից գրեթէ ազատ. մանուկների մէջ տարածուած չեն վարակիչ հիւանդութիւններ ու մահ. բժշկի ու հիւանդանոցի անունը չի սարսափեցնում. բարձրատիճան մարդոց քմահաճոյքի առաջ չի երևում սարկական ոդի ու երկիւղ:

Այս ամէնը շատ աղդեցութիւն ունի նաև գերմանական ժողովրդի տնտեսական կեանքի վերայ:

Երեխաներին դպրոցում ուսում տալը շատ ժան է. իսկ ժողովրդական դպրոցներում ուսումը բոլորովին ձրի է:

Բազմատեսակ բարեգործական ընկերութիւններ հոգս են տանում, որ թոյլ կամ հիւանդ երեխաներն ամառը, արձակուրդներին, գիւղում, ծովեզերքում, անտառաւէտ ու առողջարար տեղերում ձրիաբար ապրեն:

Գերմանիայի մէջ փոքր ընտանիքներ սակաւ են. վեց, եօթը, ութը երեխաներով ընտանիքները սովորական են. և այսպիսի ընտանիքները ապրում են ամենայն ճշդութեամբ, ամէնքը մաքուր հագնուած, կուշտ, տան մէջ կատարեալ կարգ ու կանոն:

Երեխաներն ընտանիքի կենդրոնն են կազմում:

Ծնողաց, մանաւանդ մայրերի յարաբերութիւնը դէպի իրանց զաւակները չափազանց սիրալեր է:

Գերմանացու մէջ ընդհանրապէս շատ է զարգացած զաւակասիրութիւնն ու ընտանեսիրութիւնը:

Գերմանացի մանուկներն այն երկիւղը չունին իրանց ծնողների առաջ, ինչպէս մեր երեխաները:

Զնայելով իրանց խստութեան՝ գերմանացի ծնողներն իրանց մտաւոր զարգացման շնորհիւ երեխաներին սարսափահար չեն անում:

Երեխաներն աւելի մեծ յարգանքով են նայում իրանց ծնողների վերայ քան թէ մեր երեխաները, որոնք յաճախ անտառակութեան զարհուրելի պատկերներ են տեսնում իրենց աչքերով. օդի բերելու համար գինետուն են վազում. տեսնում են թէ ինչպէս հարբած հայրը իրանց մօրն է ծեծում և այլն:

Բ.

Գերմանիայում ծնողները մտածում են նաև, որ իրանց որդիքը անկախ լինին։

Ծնողներն իրանց բոլոր իշխանութեամբ հանդիպարձ չեն մոռանում երեխայի ինքնուրոյնութիւնն ու կամքը, որ կոյր հնազանդութեան կապանքներով, ծնողական քմահաճոյքներով չկաշկանդուած՝ աւելի լաւ է կազմակերպվում ու զօրանում։

Ծնողներն ուշադրութեամբ դիտում են իրանց որդոց զարգացող հակումները։ Նրանց քայլերն ուղղում են դէպի այն ճանապարհը, որ առաւել համապատասխան է լինում նրանց ընդունակութիւններին ու հակումներին։

Այս կերպով երեխաների մէջ զարգանում է ինքնուրոյնութիւն ու անկախութիւն, այլ ոչ թէ ծնողական կամքին կոյր հնազանդութիւն։

Երեխաների սենեակում կարգապահութիւնը մի ամբողջ ծրագրի բնաւորութիւն ունի. իսկ դերմանական ճշտապահութիւնը հանրածանօթ իրողութիւն է։

Երեխաները միշտ միևնոյն ժամին են վեր կենում, միևնոյն ժամին նախաճաշում, որոշեալ ժամին զբօսնելու գնում և այլն և այլն։

Երեխայի պատիւարակութիւնը՝ մինչև դպրոց մտնելը, բոլորովին մօր խնամքին է յանձնուած։

Նա սովորեցնում է նրան աղօթել, երգեր երգել. զբաղեցնում է զանազան պատմութիւններով.

հետը խաղում է. սովորեցնում է քաղաքավարի, մաքրասէր ու ճշմարտախօս լինել. գերմանացիները սուտ խօսել չգիտեն։

Աւելի մեծ հասակի երեխաների համար երբեմն բոնտա են վարձում՝ իբրև մօրը օգնական, որ լինում է մանկավարժական ու առողջապահական դիտելիքներին փոքր ի շատէ հմուտ աղջիկ։

Տան միջի ամենամեծ ու լուսաւոր սենեակը գերմանացին անպատճառ մանկանոց է դարձնում։

Բրդեայ ծանր վարագոյրներ, գորգեր կամ կակուղ կարասիներ մանկանոցների մէջ չեն դրվում, և այս սովորութիւնը առողջապահութեան տեսակէտից շատ կարևոր է. իսկ պատերի թուղթը, (օրոյները) պայծառագոյն է լինում։

Երկաթեայ մահճակալները դրուած են լինում սենեակի մէջտեղը և ոչ թէ որևէ անկիւնում կամ պահարանների ետևը. կահկարասիքը փայտեայ է. լապտերները կախուած՝ հրդեհի վտանգի առաջն առնելու համար։

Գերմանիայում խիստ տարածուած է ճոճքը (կաչելի), որ սովորաբար կապուած է լինում մանկանոցի դրան վերին սեամքից. նա մի փոքրիկ աթոռ է՝ ամէն կողմից պատած, այնպէս որ մէջը նստող երեխան չէ կարող ընկնել, և ուղեցած ժամանակը կարող է ճոճուել։

Գերմանիայում սենեակների օդը միշտ մաքրվում է. անները բարձր առաստաղ և շատ պատուհաններ ունին։

Ձմեռնային մեղմ ցրտերի պատճառով պատուհանները պինդ չեն փակվում, այլ յուրախ բացվում են:

Մանկանոցի օդի միջին բարեխառնութիւնը լինում է 14—15° Ռ.:

Աւելորդ է ասել, որ մայրն ինքն է կաթ տալիս երեխային, եթէ միայն առողջ է ու բաւականաչափ կաթ ունի. դերմանացի մօր այս ամենառաջին ու սրբազան պարտականութիւնն է:

Ծծմայրները միշտ գտնվում են բժշկական հսկողութեան տակ, և ծնողները ապահով են, որ իրենց զաւակների համար առողջ ծծմայր կարող են վարձել:

Եթէ աղքատութեան պատճառով մի ընտանիք անկարող լինի ծծմայր վարձել, երեխային կովի զտուած կաթով են կերակրում, կամ թէ չէ մի քանի անգամ եփուած կաթով, ուր արդէն սխտապատճառ միկրոբները ջնջուած են լինում:

Գերմանացիները, թէ մեծերը և թէ փոքրերը, քիչ-քիչ բայց շուտ-շուտ են ուտում. նրանցից շատերը խելօք ընդակերներ են (շաբաթը երկու, երեք կամ աւելի քիչ անգամ են միս ուտում). ուտում են օրական չորս-հինգ անգամ:

Երեխայք մինչև երկու տարեկան հասակը ատնուշանքներ չեն ստանում. թէյ կամ սուրճ վեցեօթը տարեկան հասակից են խմում կամ ամենաւին չեն խմում, և կամ թէ շատ թոյլ խմում են կաթով եփած թոյլ կակաո. երեխաներին գինի ամենևին չեն տալիս:

Նորածին երեխաների ձեռները խանձարուրով ամենևին չեն կապկպում, ինչպէս անում են մերոնք:

Ձեռներն ազատ են մնում հէնց առաջին օրից:

Մինչև մէկ տարեկան լինելը երեխային ամէն օր լուանում են 28° Ռ. ջրի մէջ, իսկ այնուհետև շաբաթական երկու-երեք անգամ 27—26° Ռ.:

Շատ մայրեր իրենց որդւոց մարմինը առաւօտներն ու պառկելուց առաջ տաքկեկ (22°—24°) ջրով սրբում են (շատ պաղ ջուրը մանկան մարմինը դրդռում է) և այս երեխաների մարմինն ու նեարդները պնդացնում է, մրսելու վտանգի առաջն է առնում և վզակապերի գործածութիւնը բոլորովին աւելորդ դարձնում:

Ծաղկի պատուաստումը պարտաւորական է ու ձրի. պատուաստի ժամանակն է մայիսից մինչև սեպտեմբերի վերջը:

Գերմանիայում, առողջապահական պայմանների ու ժողովրդի զարգացման շնորհիւ, ծաղիկը հազուագէպ հիւանդութիւններից մէկն է:

Մաքրութիւն ամէն տեղ և ամէն բանի մէջ:

Գ.

Շատ օդ և շատ ջուր—այս գերմանացու ամենագլխաւոր պահանջներից մէկն է, և նոյնը նա աշխատում է գործադրել իւր զաւակների համար:

Ծնողները նայում են, որ իրենց երեխաները որքան կարելի է շատ երկար լինին մաքուր օդի մեջ։

Երեխաներին զբօսնելու են տանում, առանց ամենաչնչին ուշադրութիւն դարձնելու եղանակի վերայ՝ ի հարկէ նոցա եղանակին համեմատ հագցնելով. բայց ոչ անձրևը, ոչ քամին և ոչ ցուրտը երեխաներին զբօսանքի տանելուն արգելք չեն լինում։

Այս մի շատ խելացի սկզբունք է. այս կերպով երեխաները կ՚ընտելանան օդի բոլոր փոփոխութիւններին և շուտ մրսելու վտանգից կազատուին։

Զբօսնում են սովորաբար ճաշից առաջ և յետոյ։

Եթէ տան մօտ պարտէզ կայ՝ երեխաները ամբողջ օրը այնտեղ են անց կացնում։

Գերմանիայի քաղաքների փողոցներում ընդհանրապէս ծառուղիներ (բուլվառ) են շինուած, ուր երեխաները կարող են վազվզել. փողոցներն էլ լաւ սալարկուած են, շատ մաքուր են պահվում և փոշի չեն բարձրացնում։ Թէև փողոցում՝ բայց և այնպէս երեխաները ամբողջ օրը մաքուր օդի մեջ են մնում։

Համարեա թէ բոլոր պարտէզներում ու պարկերում երեխաների խաղերի համար առանձնացած տեղեր կան, ուր լցած է լինում դէղով աւազ։

Մի քանի պարկերում կան նաև մարմնամարզական զանազան գործիքներ, ի հարկէ աւելի չափահաս մանուկների համար։

Գերմանացի երեխաները խիստ շատ խաղեր ունին, այդ բոլոր խաղերի նպատակը երեխաների

մկանունքները, մարմնի դիւրաշարժութիւնը, ճարպիկութիւնը, ուշադրութիւնը, մինչև իսկ ձայնը զարգացնելն է։

Գերմանական խաղերը ընդհանրապէս երգեցողութեամբ են լինում։

Թէ հարուստ և թէ աղքատ գերմանացիները միշտ ձգտում են դէպի բնութեան գիրկը, և ով որ երբևիցէ ապրել է Գերմանիայում, անշուշտ նկատած կը լինի, թէ ինչպէս ամէնքը—հարուստն ու աղքատը, ծերն ու երիտասարդը կիւրակի օրերը թողնում են իրենց բնակարանը և ոտով գնում մաքուր օդի մեջ զբօսնելու։

Երեխաներն այս զբօսանքների ժամանակ համարեա միշտ իրանց ծնողաց հետ են լինում, և մարդ զարմանում է նրանց դիմացկութեան վերայ։

Դպրոցներումն էլ յաճախ զբօսանքներ են կատարվում, և հեռուից արդէն լսելի է լինում աշակերտների ուրախ ծիծաղը, զուարթ կանչ ու ճիչը։

Գերմանական դպրոցներից շատերն իրանց առանձին երաժշտական խումբն ունին աշակերտներից կազմուած, որոնք սովորում են ամենապարզ երաժշտական գործիքներով նուագել. և այս երաժշտական խումբը, ուր սովորաբար լինում են թմբկահար ու սրինգահար, առաջնորդում է երեխաներին դաշտային զբօսանքների ժամանակ։

Որոշեալ տեղը հասնելով՝ երեխաները սկսում են վազվզել, երգել. մէկը միջատներ կամ բոյսեր

է հաւաքում, միւսը ծառի վերայ բարձրանում, մի երրորդն էլ գնդակ է խաղում։

Դաշտային այսպիսի զբօսանքներ կատարում են նաև լուր օրերը, հետևաբար այդ օրերը դասեր չեն լինում։

Այսպիսի զբօսանքներ լինում են նաև ձմեռը։

Բայց մենք լուր օրերը զբօսանքներ կատարելուց վախենում ենք, որ մի դուցէ դասեր պակասին և աշակերտներն ուսման ընթացքը չկարողանան անցնել։

Սակայն ոչ միայն շատ ու շատ ցաւելը, որ մենք այս կողմից էլ շատ յետ ենք մնացել. օդից, լոյսից, զուարճութիւնից աւելի ինչ բան կարող է օգտակար լինել երեխաներին։

Գերմանիայում շատ յաճախ այսպէս կոչուած «մանկական հասարակական ուծներ» են սարքվում, որոնք սովորաբար հասարակական պարտէզներում են լինում։

Պարտէզը զարդարվում է դրօշներով, երեկոյեան՝ լապտերներով. շինում են մարմնամարզութեան յարմար բաներ՝ կարուսել. երեխայքը էշ հեծած արշաւում են. երեկոյեան դէմ ամէն մի երեխայ փոյտի ծայրը անցրած մի լապտեր է ստանում և երաժշտական խմբի առաջնորդութեամբ «ջահընթացք» (ֆակելցուգ) են կազմում ու երգում, որ Գերմանիայում շատ տարածուած է. այսպիսի դէպքերում հրախաղութիւններ ևս լինում են։

Գերմանիան աշխատում է ոչ միայն «առողջ

հոգու» (mens sano), այլ և նոյն չափով «առողջ մարմնի» (corpore sano) զարգացման վերայ։

Ամէն մի ժողովրդական դպրոց մարմնամարզութեան դահլիճ ունի։

Միայն 9—10 տարեկանից վեր երեխաներն են մարմնամարզութեամբ պարապում։

Իսկ մինչև այդ տարիքը նրանք խաղում են, վազում են, յատակում են և այլն։

Այս ամէնը շատ օգտակար ազդեցութիւն է գործում օրգանիզմի վերայ, և այսպիսի դաստիարակութեան արդիւնքը պարզ երևում է ամէն բանի մէջ։

Այս ամէնի շնորհիւն է, որ գերմանացին առողջ է, մաքուր, հաստատակամ, արդարասէր, աշխատասէր ու ճշդապահ ամէն բանի մէջ։

Հարկաւ Գերմանիայումն էլ կան բացառութիւններ։

Շատ լոյս, շատ օդ, շատ շարժումներ—ահա գերմանացի երեխաների ֆիզիքական զարգացման հիմնակէտը։

Դ.

Գերմանացիները, ըստ երևոյթին, մեր չափ կրօնասէր չեն։

Երեխաների կրօնական կրթութեան վերայ սկսան առանձնապէս ուշադրութիւն դարձնել միայն 25—30 տարի առաջ, և այս նպատակով Գերմա-

նիայի մէջ հաստատուելու ընկերութիւններ՝ շատ մանաձիւղերով։

Այս ընկերութիւնները, որոնք հիմնեցին դպրոցներ, ժողովրդական ակումբներ, կիրակնօրեայ մանկական առաւօտներ և այլն, բարոյական քարոզներ են խօսում՝ թէ պէտք է բարիք գործել բարիքի համար և ոչ թէ վարձատրութեան յոյսով։

Սուրբ Գիրքը ուսուցանելիս ուշադրութիւն են դարձնում ոչ թէ դէպքերի հրաշականութեան, այլ նրանց բարոյական նշանակութեան վերայ։

Կրօնական դասագրքերի մէջ բարոյագիտական տարրը ընդհանրապէս շատ մեծ տեղ է բռնում։

Կրօն դաս տալիս ուսուցիչը աշխատում է աշակերտների մէջ Ս. Գիրքը կարդալու բաղձանք զարթեցնել։

Կայ այսպէս կոչուած «մանկական աստուածպաշտութեան կարգ», որին ներկայ են լինում 6—12 տարեկան երեխաք։

Այդ կարգը—կրօնական զրոյցներ են. երեխաները եկեղեցական երգեր են երգում, պատարագ նրանց հետ զրոյց է անում զանազան նիւթերի վերայ և այլն։

«Դժուարութեամբ կարող են հասկանալ—ասում է յայտնի պարոն Կորֆը,—նրանք, որոնք ժողովրդի մօտ չեն, թէ ի՞նչ ազդեցութիւն ունի գիւղացու վերայ իւր որդու եկեղեցում երգելը կամ չերգելը...»։

Թողնում եմ ասել, որ գիւղացին եկեղեցու նախադուռն է համարում դպրոցը. անդրադէտ ծնողը իւր որդու դպրոցական յառաջադիմութիւնը չափելու ուրիշ միջոց չունի. ապէս գիւղացին էլ որի որդին դպրոց չի գնում, երբէք դպրոցի գոյութիւնը միտք չի բերիլ, մինչև որ չը լսէ եկեղեցում դպրոցական մանուկների ներդաշնակ երգեցողութիւնը։

Ժողովրդին ուրիշ մեծ ծառայութիւն կարելի չէ անել, բայց միայն գիւղերում երգեցիկ խմբեր պատրաստելով»։

Գերմանական ընտանիքներում երաժշտութիւնը շատ է տարածուած։

Հարուստն ու աղքատը հոգս են քաշում, որ իրենց զաւակները նուագել սովորեն. և համարձակութեամբ կարելի է ասել, որ համարեա թէ ամէն մի երեխայ գիտէ այս կամ այն գործիքի վերայ նուագել։

Վաղուց են անցել այն ժամանակները, երբ թատրոնի վերայ նայում էին իբրև մի պիղծ ու սատանայական բանի վերայ։

Այժմ ոչ մի խելքը գլխին մարդ չի արգելում, որ իւր որդին կամ աղջիկը իւր զարգացման ու հասակին համեմատ ներկայացման երթայ։

Գերմանիայում կիւրակէ և ազն օրերին՝ ցերեկով մանկական ներկայացումներ են տրվում, որոնց նիւթը առնուած է լինում յայտնի հեքիաթներից կամ պատմութիւններից—«Մոխրատիկը», «Քնած գեղեցկուհին», «80 օրուայ մէջ աշխարհի շուրջը», «Կապիտան Գրանդի որդիքը» և այլն։

Այս ներկայացումներին գալիս են նաև աղքատ երեխաները, որովհետև դներն ամենքին մատչելի են։

Այս ներկայացումներից զատ՝ լինում են նաև աշակերտական ներկայացումներ։

Ե.

Մարդս աւելի լաջորէն է հոգս քաշում իւր որդու մասին, երբ նա գպրոց է մտնում։

Մինչև գպրոց մտնելը երեխան բոլորովին անհոգ է մեծանում՝ առանց ամենևին իմանալու իւր ծնողաց կրած որևէ զրկանքը։

Եթէ միայն երեխան առողջ է և տան մօտ կայ մի կտոր դեռին՝ երեխայի հնարագիտութիւնը թէ խաղալիքներ և թէ զուարճութիւններ է ստեղծում։

Բայց դժբախտաբար կեանքը այնքան բան է պահանջում մեզանից, այնքան շատ դիտութիւն ու հնարք, որ ստիպուած ենք երեխաներին շատ կանուխ այբբենարանի առաջ նստեցնել, և այս կերպով նոցա կեանքի անհոգ շրջանը կարճանում է։

Բախտաւոր են այն երեխաները, որոնք իրանց ուսման ժամանակը մանկական պարտէզներում են սկսում։ այսպիսիները իրանց երեխայութիւնը շատ արագ չեն կորսնցում։

Գերմանիայում մանկավարժների բերանից յաճախ լսում է, թէ մանկական պարտէզները, ուր խաղերն ու զբաղմունքները կանոնաւորուած են, և կամ ուր երեխաներին սովորեցնում են խաղի՝ նոցա ինքնուրոյնութիւնից զրկում են. այսպիսի երեխաները դպրոց մտնելիս հիասթափվում են, որովհետև այնտեղ չեն գտնում այն մանկական ոգին։

Իբրև սկզբունք շատ լաւ լինելով հանդերձ՝ մանկական պարտէզները թէ տեսականապէս և թէ գործնականապէս ամենայն իրաւամբ շատ էական առարկութիւններ են առաջ բերում։

Մանկական պարտէզ յաճախող երեխաները դիտութիւն աւելի շատ են ունենում, քան թէ մինչև դպրոց մտնելը տանը մեծացած երեխաները։

Այստեղ նրանք խաղով ու զուարճանալով դիտութիւն են ձեռք բերում, և այս, անտարակոյս, մանկական պարտէզների մեծ արդիւնքներից մէկն է կազմում։

Այսպէս թէ այնպէս՝ ժողովրդական մանկական պարտէզների նպատակն է մի կողմից օգնել այն մայրերին, որոնց կարիքը ստիպում է անից դուրս երթալ աշխատելու և իրենց որդւոց բոլորովին երեսի վերայ թողնել։

Իսկ միւս կողմից՝ հասարակութեան ու եկեղեցու պահանջին համեմատ՝ կրթութիւն ստանալու հնարաւորութիւնից զրկուած մանուկներին տալ կարևոր տարրական դաստիարակութիւն։

Մանկական պարտէզները իրենց կազմակերպութեան բնաւորութեամբ ոչ մի ընդհանուր կէտ չունին դպրոցի հետ. նրանց կազմակերպութիւնը համապատասխանում է կատարելապէս առողջ ընտանեկան կեանքի:

Այս պարտէզների մէջ՝ կրթուած կանայք ու օրիորդներ առիթ կունենան շփուելու ժողովրդի ստոր դասակարգի հետ և հետևաբար նրան օգտակար լինելու:

Գերմանիայում այսպիսի մանկական պարտէզներ բաւական շատ կան:

Կան և այնպիսի պարտէզներ, ուր երեխաներին նաև կերակուր են տալիս, մինչև իսկ վանտա. խիտ չքաւորները ձրի են կերակրվում:

Մանկական պարտէզների նպատակն է՝ խաղ մաքուր օդի մէջ, մարմնամարզութիւն, զբօսանք, երաժշտութիւն, երգեցողութիւն, երգեր բերան սովորել:

Մանուկներն զբաղվում են այլ և այլ անոյշ աշխատանքներով՝ խոհանոցում, ննջարանում, սեղանատանը. աշխատում են պարտէզում ու բանջարանոցում:

Շատ աննկատելի կերպով են ստիպվում երեխաները այսպիսի աշխատանքներ կատարելու. այս աշխատանքները երեխայի զարգացման համեմատ փոխվում են.

Մանկական պարտէզներում երեխաներին սովորեցնում են մաքրասէր ու խնայող լինել, կարգով պահպանել պարտէզին պատկանած իրերը. երեխայք սովորում են առանին անտեսութեան հիմունքները, սովորում են յարգել աշխատանքն ու աշխատաւորը և այլն:

Այսպէս ուերմն, մանկապարտէզների նպատակն է երեխային հոգեպէս ու ֆիզիքապէս զարգացնել. նրան հետզհետէ մոցնել՝ առանց ոստիւնների ու խոտորումների, բնութեան, դիտութեան ու գեղարուեստի աշխարհը:

Գերմանիայում դպրոցը պատուաւոր տեղ է բռնում:

Ինչպէս որ ընտանեկան դաստիարակութեան ու ուսուցման վերաբերեալ ամէն բանի մէջ՝ այնպէս էլ երեխաներին խրատելու մէջ, որ դպրոցի նպատամամբ իրենց պարտքը կատարեն, դլխաւոր դերը մայրն է խաղում:

Մայրը հաւատարիմ է մնում իւր զաւակին նրա ծննդեան րոպէից մինչև վերջին հատակը. ապրում է նրանով ու նրա համար:

Եթէ այսօր Գերմանիան մեծ աշխարհ է իւր մտաւոր զարգացման ու դաստիարակութեան շնորհիւ, այդ փառքի մի մասն էլ նա պարտական է դերմանայի կնոջ:

Ահա դերմանական կրթութիւնը: Ուրեմն համոզուենք, որ ամէն ինչ կախուում ունի լաւ դաստիարակութիւնից ու մտաւոր կրթութիւնից՝ ժամանակի ոգուն համապատասխան, և վերջապէս թէ «երեխաների մէջ է ապագայ մարդկութիւնը»:

Համոզուենք, թէ ամէն տեսակ չարիքների արմատը տգիտութիւնն է, և նաև այն՝ թէ ուղիղ

նպատակին է հասցնում այն ճանապարհը, որով գիտութիւնն է առաջնորդում մարդկութեանը:

Այս համոզմունքն ու գիտակցութիւնը ապաքէն միթիթարական է. նա կը ապրեցու ու գործելու ոյժ ու արիութիւն ինչպէս իւր՝ այնպէս էլ ընդհանուրի օգտին:

1224-1232

2013

<< Ազգային գրադարան
NL0072563

<< Ազգային գրադարան
NL0072567

<< Ազգային գրադարան
NL0072562

<< Ազգային գրադարան
NL0072566

<< Ազգային գրադարան
NL0072561

<< Ազգային գրադարան
NL0072565

<< Ազգային գրադարան
NL0072560

<< Ազգային գրադարան
NL0072564

<< Ազգային գրադարան
NL0072559